ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՐԵՆԻ ԲՆՕՐՐԱՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՌՆԱԶԱՎԹՈՒՄԸ (ՕԿՈՒՊԱՑԻԱՆ) ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԶՐԿՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետությունը դատապարտում է հայրենի բնօրրանի՝ Հայաստանի տարածքների բռնազավթումը (օկուպացիան) և հայերի Մեծ հայրենազրկումը Թուրքիայի Հանրապետության կողմից:

Հոդված 2. Հայ ժողովուրդը ճանաչում է հայրենի բնօրրանի՝ Հայաստանի տարածքների նկատմամբ հայրենատիրության անօտարելի իրավունքը և հետամուտ է պահանջատիրության (տարածքային, նյութական, բարոյական) իրավունքի իրացմանը:

Հոդված 3. Հայ ժողովուրդը վերահաստատում է Թուրքիայի Հանրապետության կողմից բռնազավթված հայրենի բնօրրանի՝ Հայաստանի տարածքներում Հայկական պետականության վերականգնման իրավունքը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Թուրքիայի Հանրապետության կողմից հայրենի բնօրրանի՝ Հայաստանի տարածքների բռնազավթումը (օկուպացիան) և հայերի մեծ հայրենազրկումը դատապարտելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

«Տակավին ուսանող՝ զգում էի Հայաստանի Հանրապետության կախարդական ուժը, քանզի շատերս ծնված և դաստիարակված լինելով Սփյուռքում, զրկված էինք ազգային ինքնության խորհրդանիշների պարգևած հպարտությունից: Օրինակ՝ պատկերազարդ դասագրքերի ու հանրագիտարանների գունավոր էջերում ուրիշ երկրների դրոշակների և քարտեզների կողքին մերը բացակայում էր: Թեև գոյություն ուներ Հայաստանի Սովետական Սոցիալիստական

Հանրապետությունը, իմ սերնդակիցների մեծ մասին թվում էր, թե մենք ժողովուրդ ենք՝ առանց սեփական հայրենիքի: Մեր ծնողների հայրենիքը «Էրգիրն» էր՝ նախկին Օսմանյան կայսրությունում, իսկ իրենք՝ մեր ծնողները, հայրենիքից զրկված, սարսափելի բռնագաղթից ու կոտորածից փրկվածներն էին...»[1]*:*

Քաղաքական հիմնավորում

Հայաստանի և Արցախի Հանրապետությունները, որպես ինքնիշխան պետություններ, որոնք վերականգնել են իրենց պետականությունը հայ ժողովրդի պատմական հայրենիքի մի մասում՝ շուրջ 42 հազար քառակուսի կիլոմետր տարածքում, պարտավոր են հայ ժողովրդին պատկանող բոլոր տարածքների վերադարձման պետական քաղաքականություն իրականացնել: Հայկական պետական քաղաքականությունը պետք է նաև իրականացվի հայ ժողովրդի պատմական տարածքների բռնազավթումը և Մեծ հայրենազրկումը դատապարտելու մասին օրենքի ընդունմամբ: Այսօրվա հրամայականն է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից օրենքի ուժով Թուրքիայի Հանրապետության դատապարտումը՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Արևելյան Հայաստանի (զգալի մասը) տարածքների բռնազավթման և հայերի Մեծ հայրենազրկման իրողության վերաբերյալ:

Հազարավոր տարիներ շարունակ հայերը եղել են իրենց բնօրրանի՝ Հայկական բարձրավանդակի և նրա հարակից տարածքների բնիկ ժողովուրդը, ինչի մասին են վկայում հարյուրավոր հնագույն հայկական գերեզմանատների, կրոնական ու մշակութային կոթողների, տաճարների, եկեղեցիների, վանքերի և հնությունների ավերակները, որոնք սփռված են Հայկական բարձրավանդակում:

Դեռևս Թուրքիայի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող հայկական բռնազավթված տարածքների վերադարձի համար հայ ժողովուրդը պետք է իրականացնի հետևողական պետական քաղաքականություն: Մեր պատմական հայրենիքի ողջ տարածքում հայոց պետականության վերականգնման խնդրում յուրաքանչյուր հայ մարդ պարտավոր է ունենալ իր մասնակցությունը, իսկ հայկական պետական հաստատությունները, իրենց լիազորությունների շրջանակում, պարտավոր են իրականացնել ծրագրային քաղաքականություն:

---

[1] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, Նախաբան:

1920-ական թվականներին սկիզբ առած և 1965 թվականից Խորհրդային Հայաստանի Հանրապետությունում, ապա նաև ողջ աշխարհում առաջացած պահանջատիրական շարժումը՝ հայերի ցեղասպանության դիմաց Թուրքիայի Հանրապետությունից արդարացի փոխհատուցում և բռնազավթված տարածքների վերադարձման պահանջի առաջքաշումը, մինչ օրս չի ստացել հայկական պետական քաղաքականության կարգավիճակ: Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության առանցքային խնդիրը Թուրքիայի Հանրապետության կողմից հայ ժողովրդին պատճառված տարածքային և նյութական վնասի հատուցումն է:

Հայ ժողովուրդն իր բնականոն զարգացումն ապահովելու համար պետք է հնարավորություն ունենա վերահաստատվելու իր պատմական հայրենիքում՝ հայկական պետականության ներքո, ինչը պետք է իրականացվի Թուրքիայի Հանրապետության ներկայիս սահմանների վերաձևման միջոցով:

Հայ ժողովրդի Մեծ հայրենազրկումը հիմնականում պայմանավորված էր Օսմանյան կայսրության տարածքում, հայության բնօրրան հանդիսացող Հայկական լեռնաշխարհում, հայերի ցեղասպանությամբ, որն իր գագաթնակետին է հասել 1894-1923թթ. թուրքական իրար հաջորդած երեք կառավարությունների կողմից՝ սուլթանական, երիտթուրքական և քեմալական: Նշված ժամանակահատվածում ցեղասպանությանը զոհ են գնացել ավելի քան 2 մլն 500 հազար հայ, 1 մլն-ից ավելին արտագաղթել է, ոչնչացվել են հայկական քաղաքակրթական արժեքներ, ավերվել են հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ, խաչքարեր, պատմաճարտարապետական և մշակութային մեծաքանակ հուշարձաններ:

Թուրքիայի Հանրապետության կողմից մինչ օրս տարվում է հետևողական քաղաքականություն՝ վերացնելու հայ ժողովրդի ներկայության ապացույցները պատմական Հայաստանում:

Թուրքիայի Հանրապետության իշխանությունները ոչ միայն ժխտում են հայերի ցեղասպանությունը և հայ ժողովրդին պատկանող տարածքների բռնազավթման փաստը, այլև, դիմելով պատմական փաստերի խեղաթյուրմանը և ցանկանալով ժամանակ շահելու միջոցով խուսափել եղեռնագործության և նրա հետևանքների հատուցումից, առաջ են քաշում պատմաբանների հանձնաժողով ստեղծելու առաջարկը:

Համաձայն միջազգային իրավունքի՝ ցեղասպանության ծրագրավորումն ու իրագործումը ճանաչված են որպես մարդկության դեմ հանցագործություն և չունեն վաղեմության ժամկետ:

Եվ այժմ՝ 1915թ. Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ, հայ ժողովուրդը պետք է Հայաստանի Հանրապետության պետական լծակների օգտագործմամբ վճռականորեն և ամենուր ներկայացնի Թուրքիայի Հանրապետության կողմից հայրենի բնօրրանի բռնազավթված տարածքների ազատագրման և Ցեղասպանության ու Մեծ հայրենազրկման հետևանքով պատճառված վնասների արդարացի փոխհատուցման խնդիրը:

Ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքում և տարածաշրջանում բնակվող քրդերը քաղաքական հայտ են ներկայացրել Քրդական անկախ պետություն ստեղծելու վերաբերյալ: Այս հեռանկարը ևս պետք է լինի Հայաստանի Հանրապետության ուշադրության կենտրոնում, և մեր ազգային անվտանգության ծրագրային գործողություններն առավել զգայուն և կանոնակարգված մոտեցումներ են պահանջում սույն հարցում:

1937-1938թթ. Թուրքիայի Հանրապետության իշխանությունները կանոնավոր բանակի ուժերով կոտորածներ սանձազերծեցին Դերսիմում, որին, բացի տասնյակ հազարավոր քրդերից, զոհ գնացին նաև բազմաթիվ հայեր, ովքեր փրկվել էին ցեղասպանությունից և ապաստան գտել Դերսիմում: 2011թ. Թուրքիայի վարչապետը Դերսիմի կոտորածների համար ներողություն է խնդրել քրդերից՝ որևէ կերպ չհիշատակելով զոհված հայերին, ովքեր 1937-1938թթ. փաստացի ենթարկվեցին կրկնակի ցեղասպանության:

Արցախյան ազատամարտի տարիներին Թուրքիան ռազմատեխնիկական, նյութական, մարդկային և քաղաքական համակողմանի աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանի նախահարձակ գործողություններին՝ ընդդեմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության: Իսկ 1993-ից մինչ օրս, Ադրբեջանի Հանրապետության հետ միասին, անօրինական շրջափակման մեջ է պահում Հայաստանի Հանրապետությունը:

Թուրքիայի Հանրապետության հայատյաց քաղաքականության շարունակականության վկայությունն են նաև սեփական պատմությանն առերեսվելու, պատմական իրողություններն իրենց անուններով կոչելու համար թուրք հայտնի մտավորականների դեմ պետական մակարդակով հարուցած իրավական, քաղաքական, ազգային-խտրական հալածանքները, որոնց 2007թ. զոհ գնաց հայտնի լրագրող, «Ակոս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը:

2009թ. հոկտեմբերի 10-ին՝ ստորագրելով հայ ժողովրդի համար մերժելի հայ-թուրքական արձանագրությունները, Թուրքիայի Հանրապետությունը փակ է պահում հայ-թուրքական

սահմանը և վերջինիս բացումը պայմանավորում հայկական երկրորդ պետության՝ Արցախի տարածքների հանձնմամբ Ադրբեջանի Հանրապետությանը:

Թուրքիայի իշխանություններն այսօր էլ շարունակում են իրենց նախորդների ցեղասպան ու հայաթափման քաղաքականությունը, ինչի ապացույցներից մեկն էլ Քեսաբի և Սիրիայի հայության դեմ ծավալած ռազմական ու էթնիկ-կրոնական զտումների գործողություններն են:

Համաշխարհային և տարածաշրջանային ահագնացող մարտահրավերների դիտանկյունից՝ այսօր առավել քան հրատապ են համահայկական ազգային ծրագրի և նոր՝ ազգային անվտանգության համընդգրկուն հայեցակարգի հռչակումն ու իրականացումը, որը պարտադիր պետք է ներառի հայոց դարավոր բնօրրանի բռնազավթված տարածքների իրավատիրության բաղադրիչը: Այդ փաստաթղթերի ընդունումը հայ ժողովրդի ազգային անվտանգության ռազմավարության առանցքային ուղղություններից մեկը պետք է լինի:

1990թ. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից ի վեր հայ քաղաքական կուսակցություններն ու օրվա իշխանությունները գրեթե ոչինչ չեն արել՝ ստեղծելու աշխարհի ավելի քան 100 երկրներում սփռված 10 միլիոնից ավելի հայությանը համախմբող ազգային անվտանգության գաղափարական և քաղաքական համալիր հայեցակարգ: Արդի հայկական քաղաքական միտքը՝ թե՛ Սփյուռքում, թե՛ Հայաստանի ու Արցախի Հանրապետություններում, պահանջում է համահայկական քաղաքական գաղափարի հռչակում, որը կլուսավորի դեպի հայոց քաղաքակրթության ակունքները մեր ժողովրդի վերադարձի և Միացյալ հայկական պետականության վերականգնման տեսլականը:

Իրավական հիմնավորում

Թուրքիայի Հանրապետության կողմից հայրենի բնօրրանի տարածքների բռնազավթումը և հայերի Մեծ հայրենազրկումը հիմնականում տեղի են ունեցել մարդկության դեմ կատարված հանցագործության հետևանքով (Օսմանյան կայսրության կողմից իրականացված՝ հայերի ցեղասպանությամբ):

Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման վերաբերյալ իր դիրքորոշումներն ու իրավաքաղաքական գնահատականը Հայաստանի Հանրապետությունն արտահայտել է ՀՀ Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության անկախության մասին Հռչակագրով,

«Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդի 1988 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1401-XI օրենքով և միջազգային պայմանագրերով:

Օսմանյան կայսրության կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի 1948թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայում նկարագրված հանցագործությանը:

1915թ. մայիսի 24-ին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը հանդես եկան հայերի հանդեպ երիտթուրքական կառավարության սանձազերծած ջարդերն ու ցեղասպանությունը դատապարտող հատուկ հայտարարությամբ, որտեղ 1915թ. ապրիլյան կոտորածները որակեցին որպես Թուրքիայի նոր ոճիրը մարդկության և քաղաքակրթության դեմ: Տեքստում մասնավորապես ասված էր. «Գրեթե մեկ ամիսէ ի վեր, Հայաստանի թյուրք եւ քյուրտ բնակիչները օսմանյան հեղինակությունների թույլտվությամբ ու հաճախ անոնց նեցուկը ունենալով՝ ջարդեր կը գործադրեն Հայերի դէմ: Նման ջարդեր տեղի ունեցան ապրիլի կեսին Էրզրումի մեջ (Կարին), Թերճան, Եղինէ, Պիթլիս, Մուշ, Սասուն, Զէյթուն եւ ամբողջ Կիլիկիո մեջ: Վանի շրջակա գրեթե հարյուր գյուղերի հայերը բոլորն ալ սպաննվեցան եւ Վանի հայկական թաղամասը շրջապատված էր քյուրտերի կողմէ: Միեւնույն ժամանակ Օսմանյան կառավարությունը չարչրկեցին Կոստանդնուպոլսո անպաշտպան հայ բնակչությունը: Մարդկության եւ քաղաքակրթության դեմ գործված Թուրքիո այս նոր ոճիրներու հանդեպ դաշնակից կառավարությունները հանրորէն կը տեղեկացնեն Մեծ Դռանը, որ թուրք կառավարության բոլոր անդամները անհատապես պատասխանատու պիտի համարվին, ինչպես նաեւ բոլոր այն պաշտոնյաները, որոնք մասնակից դարձան այս ջարդերուն»:

Հայոց ցեղասպանության փաստի արձանագրման համար բազմաթիվ վկայություններից, փաստաթղթերից բացի, հիմք են հանդիսանում նաև թուրքական ազգային դատարանների 1919-1920թթ. կայացրած դատական ակտերը, համաձայն որոնց՝ թուրք բարձրաստիճան պետական պաշտոնյաներ դատապարտվել են անձանց էթնիկ հատկանիշներով պայմանավորված զանգվածային կոտորածներ իրականացնելու և բռնի տեղահանումների համար:

1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված՝ Հայաստանի անկախության մասին Հռչակագրի 11-րդ

կետը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915թ. օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»: Հռչակագրի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունը իրավական պարտավորություն վերաստանձնեց՝ հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական՝ տարածքային, նյութական և բարոյական վնասների փոխհատուցման պահանջներ ներկայացնելու համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմք հանդիսացող՝ Հայաստանի անկախության մասին Հռչակագրում ամրագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները ճանաչում են հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար պատասխանատվության հետապնդման ստանձնման հիմնախնդիրը և Հայաստանի ժողովրդի միասնական կամքը՝ գիտակցելու այդ պատասխանատվությունը համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում:

Ներկայիս Թուրքիայի Հանրապետության՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի, պատասխանատվության հարցի բարձրացումը պետք է հանգեցնի մինչեղեռնյան իրավական վիճակի վերականգնմանը:

Պատմական հիմնավորում

Հայ ժողովուրդը հազարամյակներ շարունակ իր պատմաքաղաքական զարգացումն է ապրել Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում, որը հայտնի է նաև Հայկական բարձրավանդակ անվամբ, և ստեղծել է իր ուրույն քաղաքակրթությունը:

Հայաստանի թագավորական արքայատոհմերն են (դինաստիաները)՝ Երվանդունիները, Արտաշեսյանները, Արշակունիները, Բագրատունիները, ինչպես նաև Կիլիկիայի Ռուբինյան արքայատոհմը, որոնք իրենց իշխանությունը տարբեր ժամանակահատվածներում տարածել են Մեծ Հայքում, Փոքր Հայքում և Կիլիկիայում:

Հայաստանն ընդգրկել է Մեծ Հայքն ու Փոքր Հայքը, որոնք իրարից բաժանվում էին Արևմտյան Եփրատով: Մեծ Հայքն ուներ ավելի քան 300 հազար քառ. կմ տարածք, Փոքր Հայքը՝ շուրջ 100 հազար, իսկ Կիլիկիան՝ մոտավորապես 40 հազար քառ. կմ տարածք:

Հայկական լեռնաշխարհի շուրջ 400 հազար քառ. կմ տարածությունից ներկայումս Հայաստանի և Արցախի Հանրապետությունների կազմում է գտնվում ընդամենը 42 հազար քառ. կմ տարածք՝ մեր հայրենիքի միայն 10 տոկոսը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին պատմական Հայկական լեռնաշխարհը՝ եզերված Եփրատ գետի արևմտյան ճյուղավորումներով, Պոնտոսի և Տավրոսի լեռնաշղթաներով և Ղարաբաղի բարձունքներով, անհավասար կերպով բաժանված էր Օսմանյան և Ռուսական կայսրությունների միջև[2]:

Թուրքիայի Հանրապետության կողմից հայրենի բնօրրանի բռնազավթված տարածքները ներառում են և հայտնի են որպես հայկական երկրամասեր՝ Արևմտյան Հայաստան, Կիլիկիա և Արևելյան Հայաստան (զգալի մասը):

<u>Արևմտյան Հայաստան</u>

1860թ. Արևմտյան Հայաստանում ստեղծվեց Ազգային սահմանադրությունը, որը դարձավ արևմտահայերի ներքին կյանքի ինքնուրույնության կանոնադրություն:

1859թ. Բարձր դուռը, ելնելով Փարիզի 1856թ. մարտի 30-ի համաձայնագրի համապատասխան դրույթից, ոչ մահմեդական համայնքների (հույներ, հայեր, հրեաներ) գլխավորներին հանձնարարեց հանձնաժողովներ կազմել ազգային կանոնադրություններ մշակելու համար: Հայ համայնքի կանոնադրությունը կազմելու նպատակով ստեղծվեց երկու հանձնաժողով. մեկը՝ առաջադրված ազգի կողմից, իսկ մյուսը՝ նշանակված Բարձր դռան կողմից: Դրանց ուժերով փոփոխված 1857թ. կանոնադրությունը վերջնականապես խմբագրված տեսքով 1859թ. դեկտեմբերին քննության առնվեց հոգևոր և գերագույն ժողովների կողմից:

1860թ. մայիսի 24-ին՝ նորընտիր պատրիարք Սարգիս Գույումճյանի օրոք, ընդհանուր ժողովը վավերացրեց կանոնադրությունը:

Սահմանադրությունը հանդես էր գալիս ոչ միայն որպես Կ. Պոլսի, այլև Արևմտահայաստանի և ամբողջ Թուրքիայի հայ ազգաբնակչության կրթական, լուսավորական, մշակութային կյանքը իրավականորեն կարգավորող փաստաթուղթ: Ազգային ընդհանուր ժողովը (երեսփոխանական ժողով) ընտրվում էր ամբողջ ազգի կողմից՝ իբրև օրենսդիր մարմին:

---

[2] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 1:

Սահմանադրական առաջին ընդհանուր ժողովը գումարվեց 1860թ. օգոստոսի 25-ին: Ժողովին մասնակցում էին 180 երեսփոխաններ, որոնցից ընտրված էին 120-ը, իսկ 60-ը անդամակիցներ էին (որ ենթադրվում էր Սահմանադրության 9-րդ հոդվածով՝ մտավորականներ և պաշտոնյա հայեր):[3]

1878 թվականին ստորագրված Սան Ստեֆանոյի և Բեռլինի հաշտության պայմանագրերով Հայկական հարցը դառնում է միջազգային քաղաքականության քննարկման առարկա, ինչը մեծ տերությունները հաճախ են շահարկել՝ օսմանյան Թուրքիայի հետ իրենց հարաբերություններում:

Ի վերջո, 1878թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) Սան Ստեֆանոյում ստորագրվեց ռուս-թուրքական Հաշտության պայմանագիրը:

Պայմանագրի 16-րդ հոդվածը վերաբերում էր Արևմտյան Հայաստանին. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»[4]*:*

Ի վերջո, ի՞նչ էր 16-րդ հոդվածը հայության համար՝ հաղթանա՞կ, թե՞ պարտություն: Հաղթանակի մասին խոսք լինել չի կարող,... Ուղղակի 16-րդ հոդվածով առաջին անգամ Թուրքիան ընդունեց Հայաստան աշխարհագրական և պատմական տարածքի գոյությունն իր նվաճած երկրների շարքում,...[5]*:*

Սան Ստեֆանոյի պայմանագիրը հիասթափություն առաջացրեց հայոց մեջ. արևելահայերն ու արևմտահայերը մեծ ակնկալիքներ ունեին պատերազմի արդյունքներից[6]*:*

---

[3] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 365:

[4] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 434:

[5] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 435-436:

[6] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 439:

…Եվ միայն Բեռլինում, երբ արդեն 16-րդ հոդվածը դառնալու էր քննարկման առարկա, Մ. Խրիմյանը, Նար-Պեյը և Ս. Փափազյանը պատասխանեցին Սոլսբերիին՝ փաստերով ապացուցելով, որ հայերը մեծամասնություն են կազմում Մեծ Հայքի Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Էրզրումի վիլայեթներում[7]:

Հայ պատվիրակներին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Վադդինգտոնը խորհուրդ տվեց փաստաթղթերն անհապաղ ուղարկել վեհաժողովի բոլոր մասնակիցներին, որպեսզի վերջիններս մինչև 16-րդ հոդվածի վերաքննարկումը ծանոթանան դրանց: Մ. Խրիմյանն ու Նար-Պեյը հունիսի 13(25)-ին Ռուսաստանի, Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի և Իտալիայի առաջին ներկայացուցիչներին հանձնեցին իրենց խնդրագրերը, Հայաստանի ինքնավարության վերաբերյալ պատրիարքական ծրագիրը և վիճակագրական տեղեկությունները: Դրանց մեջ էին «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի», «Վիճակագիր Օսմանեան Հայաստանի», որին կցված էր ապագա ինքնավար Հայաստանի աշխարհագրական քարտեզը: Այդ վիճակագրությունն ապացուցում էր, որ իր պատմական հայրենիքում (այն նահանգներում, որտեղ առաջարկվում էր բարենորոգումներ կատարել՝ Էրզրումի ու Վանի վիլայեթներ, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, Արղնի սանջակը, Սղերդի սանջակի հյուսիսային մասը և Տրապիզոնի ու Բաթումի միջև գտնվող Ռիզե նավահանգիստը) հայությունը կազմում է բացարձակ մեծամասնություն, իսկ թուրքերը՝ հայերի թվաքանակի մեկ երրորդը: Որպես ապացույց՝ մատնանշվում էին Ուրիչինիի 1845թ. մարդահամարի տվյալները, որում, նույնիսկ խիստ նվազեցված, հայերի թվաքանակը ներկայացված էր երկու և կես միլիոն, և արվում էր եզրակացություն, թե երեք տասնամյակի ընթացքում այդ թվաքանակը պետք է հասած լիներ երեք միլիոնի[8]:

Վեհաժողովի 12-րդ նիստում միայն քննարկվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը:

Հունիսի 30-ին (հուլիսի 9-ին) Սոլսբերին վեհաժողովին է ներկայացնում անգլիական և թուրքական պատվիրակությունների կողմից վերախմբագրված 16-րդ հոդվածը, որը դառնում է Բեռլինի վեհաժողովի 61-րդը. «Բարձր դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր

---

[7] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 442:

[8] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 443:

դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»:

Փաստորեն, 16-րդ հոդվածի առաջին մասը, որում նշվում էր «Հայաստան» անունը, կրճատվել, և մնացել էր երկրորդ մասի «հայաբնակ մարզեր» արտահայտությունը, իսկ որոնք էին այդ տարածքները, որտեղ էին սկսվում և վերջանում, ոչինչ հայտնի չէր[9]:

61-րդ հոդվածի մասին բազմաթիվ կարծիքներ են հայտնել այլազգի և հայ հետազոտողները: Հայ ուսումնասիրողների մի մասն անհաջողության մեղքը բարդել է հայ պատվիրակների վրա, որ նրանք անձեռնհաս էին այդ գործերում: Պարզ է մի բան, ովքեր էլ լինեին պատվիրակները, արդյունքը լինելու էր նույնը եվրոպական պետությունների միջև գոյություն ունեցող հակամարտության պատճառով:

Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածն արևմտահայության համար դարձավ սպառնալի ահազանգ և ժողովրդին մղեց զանգվածային արտագաղթի[10]:

Հայկական հարցը Թուրքիայի ներքին հարց լինելուց դարձավ միջազգային դիվանագիտության քննարկումների առարկա: Սան Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածները դրանց արտահայտություններն էին, և հայության արևելյան ու արևմտյան հատվածները համոզվեցին, որ «օտարէն պէտք չէ բան յուսալ», որ Հայկական հարցի լուծումը պետք է որոնել ոչ թե Բեռլինում, այլ բուն երկրում՝ Հայաստանում: Հայության մտքի սևեռուն գաղափարը դարձավ ոչ թե «թղթե», այլ «երկաթե շերեփը»: «Մարդ ինքն իրմէն պէտք է աշխատի, որ փրկվուի»,- Բեռլինի վեհաժողովի հայ պատվիրակ Մկրտիչ Խրիմյանի կոչը դարձավ ամբողջ հայության գործունեության մարտավարությունը[11]:

XIX դարավերջին Արևմտյան Հայաստանը ներառում էր յոթ նահանգ (վիլայեթ)՝ Վան, Էրզրում, Սեբաստիա, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Տրապիզոն:

Այդ տվյալները վերջնական մշակման ենթարկվելով՝ ամբողջացվեցին միայն 1882թ.: Ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի առաջին համընդհանուր վիճակագրության՝ հայ բնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ[993].

---

[9] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 445:

[10] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 446:

[11] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 5-6:

ա. Արևմտյան Հայաստան (Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի վիլայեթներ) – 1 միլիոն 630 հազար մարդ,

բ. Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք (Ադանայի և Հալեպի վիլայեթներ) – 380 հազար մարդ,

գ. Ասիական Թուրքիայի վիլայեթներ – 455 հազար մարդ,

դ. Եվրոպական Թուրքիայի վիլայեթներ[994] - 60 հազար մարդ,

ե. Կ. Պոլիս՝ արվարձաններով – 135 հազար մարդ,

Ընդամենը – 2 միլիոն 660 հազար մարդ[12]:

1894-1896թթ. հայերի զանգվածային կոտորածները արևմտահայերի առաջին ցեղասպանությունն էր, որին զոհ գնացին հարյուր հազարավոր հայեր, բազմահազարներն արտագաղթեցին տարբեր երկրներ: Թալանվեցին և ավերվեցին հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ, մի զգալի մասն էլ մզկիթների վերածվեց: Արևմտյան Հայաստանում ժողովրդագրական իրավիճակը հօգուտ մահմեդականության փոխելու համար Օսմանյան կայսրությունը շարունակաբար կազմակերպում էր հարյուր հազարավոր մահմեդականների ներգաղթ:

1894-1896թթ. ընթացքում կոտորված հայերի թվաքանակը հասավ 300 հազարի: Այդ կոտորածները կրում էին համատարած, կանխամտածված և կազմակերպված բնույթ, իրականացնողն ինչպես մոլեռանդ մահմեդական բնակչությունը, այնպես էլ ոստիկանությունն ու կանոնավոր բանակն էին: Սուլթանական իշխանությունների հիմնական գործիք դարձավ կրոնը, որի միջոցով հնարավոր եղավ տարբեր մահմեդական ցեղախմբեր միավորել ընդդեմ ընդհանուր թշնամի հանդիսացող քրիստոնյա հայ բնակչության[13]:

Գաղթն ընդգրկել էր ողջ Արևմտյան Հայաստանն ընդհանրապես, սակայն առանձնակի մեծ էր այն տարածքներից, որտեղ հաստատված քրդերը (նաև՝ չերքեզներն ու կարափափախ թուրքերը) լայնորեն ներգրավվել էին համիդիե գնդերի համակարգում[14]:

---

[12] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 451:

[13] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 538:

[14] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես -1 918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 540:

Ըստ էության, Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության սկիզբը դրվեց XIX դարի 90-ական թթ.: «Արյունոտ» սուլթանի քաղաքականությամբ էլ պայմանավորվեցին հետագա մեկ տասնամյակի ընթացքում ձևավորված ժողովրդագրական խիստ բացասական և հայերի համար վտանգավոր միտումները: Հայ բնակչության թվաքանակն աղետալի չափով նվազեց հատկապես Արևմտյան Հայաստանում: 1895-1896թթ. կոտորածների ժամանակ և նրան հաջորդած տարիներին հայաթափվեցին հարյուրավոր բնակավայրեր. հսկայական չափերի հասավ արտագաղթը, որն ուղեկցվում էր մահմեդական այլնայլ ցեղերի ուժեղ ներհոսքով: Վերջիններս «մուհաջիրներ» («գաղթականներ») անվան տակ ավելի ու ավելի հիմնավոր կերպով էին հաստատվում Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում: Դա էր պատճառը, որ 1880-ական թթ. Օսմանյան կայսրության ավելի քան 3 միլիոն հայ բնակչությունը XX դարի սկզբին զգալիորեն նվազել էր՝ կազմելով 2 միլիոն 200 հազար մարդ…:[15]

XIX դարավերջին և XX դարասկզբին Թուրքիայի պետական քաղաքականության առանցքը կազմող՝ արևմտահայերի կոտորածներն ու հայրենազրկումն իրենց գագաթնակետին հասան 1915թ., երբ պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարակիրներ երիտթուրքերն ու օսմանյան կառավարիչներն իրագործեցին պատմական հայրենիքում ապրող արևմտահայերի ցեղասպանությունն ու Մեծ հայրենազրկումը: Սպանվեց մեկուկես միլիոնից ավելի հայ, շուրջ մեկ միլիոնն արտագաղթեց, ավերվեցին 2000-ից ավելի վանք ու եկեղեցի: Պղծվեցին ու ավերվեցին հայկական հազարամյա պատմական և մշակութային արժեքներն ու կոթողները…

1915-1916թթ. ցարական Ռուսաստանի զորքերն ու հայկական կամավորական ջոկատներն ազատագրում են Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններ՝ Վանը, Մուշը, Բիթլիսը, Էրզրումը: 1917թ. Ռուսաստանում իշխանությունը վերցրած բոլշևիկյան կուսակցության խորհրդային իշխանությունը դեկտեմբերի 29-ին հրապարակեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որով ճանաչվում էր արևմտահայերի ազատ ինքնորոշման, անկախության իրավունքը, որը, սակայն, չէր կարող կյանքի կոչվել, քանի որ ռուսական մեծաթիվ զորքերը կրկին արագորեն հեռանում էին Արևմտահայաստանից՝ փաստացի ճանապարհ բացելով թուրքերի համար:

1918թ. հունվարին Ժողկոմխորհի հրապարակած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը ինքնորոշման սկզբունքը հռչակում էր իբրև ծխածածկույթ՝ նրա տակ ռուսական բանակները

[15] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918թ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 544:

հետ կանչելու համար: Դեկրետը պաշտպանում էր բոլոր արևմտահայ տեղահանվածների և փախստականների տունդարձը և ազգային միլիցիայի ուժերի, ինչպես նաև ժամանակավոր ժողովրդական վարչության ստեղծումը Հայկական լեռնաշխարհում: Փաստորեն, այս ծրագիրը անիրագործելի էր, եթե ոչ ցինիկ պատրվակ՝ ռուսների կողմից Արևմտահայաստանը լքելու համար: Տիրապետող պայմաններում արևելահայերի և արևմտահայերի համար հավասարապես ինքնորոշման մասին խոսք իսկ չէր կարող լինել[16]:

1918թ. սկզբին, ռուսական բանակի հեռանալուց հետո, թուրքերը հարձակման են անցնում և գրավում Երզնկան, փետրվարին՝ Էրզրումը, մարտին՝ Վանը: Թուրքերն այդպիսով կրկին բռնազավթում են Արևմտյան Հայաստանը: 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային է հանձնում Արևմտյան Հայաստանը, իսկ Արևելյան Հայաստանից՝ Կարսը, Արդահանը, Բաթումը:

Հավասարապես դաժան հարված հասցրեց հայերին Ժողկոմխորհի 1918թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրումը: Այդ պայմանագրի հոդվածներով Խորհրդային Ռուսաստանը զիջում էր Գերմանիային և մյուս Կենտրոնական տերություններին ավելի քան 2.5 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք՝ շուրջ 60 միլիոն բնակչությամբ: Լենինի կառավարությունը ճանաչեց նաև Օսմանյան կայսրության գերիշխանության իրավունքը ամբողջ Արևմտահայաստանում և, թեև Անդրկովկասում չուներ ոչ մի իրական իրավասություն, Թուրքիային էր զիջում Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները: Պայմանագիրը նաև նախատեսում էր, որ ռուսական զինված ուժերը պետք է ավարտեն իրենց նահանջը Արևմտահայաստանից և անդրկովկասյան երեք շրջաններից ութ շաբաթվա ընթացքում: Ժողկոմխորհը խոստանում էր նաև օգտագործել բոլոր հնարավոր միջոցները՝ ցրելու Ռուսաստանում և Թուրքիայից «գրավված նահանգներում» գործող հայկական զինված խմբերը: Հայերը, որոնք փորձում էին պահպանել թուրքական ռազմաճակատը ռուսական զանգվածային դասալքումների և Բրեստ-Լիտովսկի բանակցությունների հետևանքով, այժմ Ժողկոմխորհին մեղադրում էին ստոր դավաճանության մեջ[17]:

1919թ. փետրվարի 12-ին Փարիզի հաշտության վեհաժողովին տերություններին ներկայացվեց «Հայկական պահանջների հուշագիր»՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության

---

[16] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 21:

[17] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 21-22:

նախագահ Ավետիս Ահարոնյանի և Արևմտյան Հայաստանի շահերը ներկայացնող Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարի կողմից: Այդ նախագծով հայկական պետության մեջ պետք է ներառվեին Արևելյան Հայաստանը, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հիմնական մասերը:

1919թ. փետրվարի 12-ին Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա.Ահարոնյանը և Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը վիճաբանություններից հետո Փարիզի վեհաժողովին ներկայացնելու համար ստորագրեցին հայկական ազգային պահանջները պարունակող հուշագիր: Ըստ այդ հուշագրի՝ մեծ տերություններից պահանջվում էր հայկական անկախ պետությունը, որը կազմված էր լինելու Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթներից (Վան, Բաղեշ, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա, Կարին և Տրապիզոն), բացառությամբ Դիարբեքիրի հարավային և Սեբաստիայի արևմտյան շրջանների: Միացյալ Հայաստանի մեջ ներառվելու էին Կիլիկիայի չորս սանջակները (Մարաշ, Սիս, Ջեբել Բերեքեթ և Ադանա), Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով (Երևանի նահանգն ամբողջությամբ, Կարսի շրջանն առանց Արդահանի հյուսիսային մասի, Թիֆլիսի նահանգի հարավային կեսը, Գանձակի նահանգի հարավարևմտյան մասը)[18]:

Հենց այն ժամանակ, երբ Երևանում գումարվում էր Արևմտահայ երկրորդ համագումարը, Վահան Փափազյանը (դաշնակցական) և Ավետիս Թերզիբաշյանը (ռամկավար) գտնվում էին Փարիզի ճանապարհին՝ մասնակցելու, իբրև Կովկասի գաղթականների ներկայացուցիչներ, մեկ այլ համաժողովի՝ Հայ ազգային համագումարին: Ժողովը հրավիրել էր Պողոս Նուբարը 1918թ. հոկտեմբերին՝ Ազգային պատվիրակությունը վերակազմելու և Հայաստանի ապագայի վերաբերյալ կենսական խնդիրները քննարկելու նպատակով[19]:

Հայ ազգային համագումարի նիստերը պաշտոնապես տևեցին 1919թ. փետրվարի 24-ից մինչև ապրիլի 22-ը՝ այդ օրերին Փարիզում տիրող լարվածության և անորոշության պայմաններում: Աշխարհի պետությունները հավաքվել էին Եվրոպայի մայրաքաղաքում՝ կամ պահանջելու, կամ պաշտպանելու: Հայերը եկել էին երկուսի համար էլ՝ վիճարկելու Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը և պաշտպանելու Հայաստանի պետականության և անկախության իրավունքը: Ազգային համագումարը միաձայն հավանություն տվեց

---

[18] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 145:

[19] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 501-502:

պաշտոնական հուշագրին, որը Պողոս Նուբարը և Ավետիս Ահարոնյանը փետրվարի 12-ին և 26-ին ներկայացրել էին Հաշտության վեհաժողովին[20]:

Հաշտության վեհաժողովին ներկայացնելու համար պատվիրակները կազմեցին նաև մի առանձին հուշագիր՝ փոխհատուցումների և ռազմատուգանքների մասին, որ «օսմանյան կառավարությունը կրելու է պատերազմի ընթացքում հայ ազգին Թուրքիայում և Կովկասում պատճառած կորուստների համար, իբրև հետևանք կոտորածների, տեղահանության և մյուս վայրագությունների»: Հուշագիրը մատնանշում էր, որ Օսմանյան կայսրությունում 1914թ. եղած 2 միլիոն հայերից 1.800.000-ը կամ սպանվել են, կամ տեղահանվել, կամ ստիպված են եղել փախչելու Կովկաս: Կից ցուցակները մանրամասնում էին մարդկանց, շարժական և անշարժ գույքի, գործիքների ու անասունների և դրամական ստացվածքի վերաբերյալ տվյալները: Ընդհանուր վնասը, ինչպես ցույց է տրված դրամական առումով, հասնում էր ավելի քան 19 միլիարդ ֆրանսիական ֆրանկի՝ 14.6 միլիարդ Արևմտյան Հայաստանում և 4.5 միլիարդ Արևելյան Հայաստանում: Հուշագիրը հետագայում քննարկվեց Հաշտության վեհաժողովի Վնասների փոխհատուցման հանձնաժողովի կողմից՝ հատուկ հանձնախմբի միջոցով, որի գործունեությունը վերաբերում էր հանձնաժողովում չներկայացված ազգերին: 1919թ. ապրիլի 14-ի իր վերջնական զեկուցագրում երեք հոգուց կազմված հատուկ հանձնախումբը մի քանի ընդհանուր խմբերի բաժանեց իր իրավասությունների ոլորտը մտնող 17 ժողովուրդների պահանջները: Հայկական պահանջները արձանագրված էին հետևյալ կերպ.

	Կարգ	Ֆրանսիական ֆրանկ	Դոլարի համարժեք
I	Նյութական սեփականությանը հասցված վնասներ, բռնագրավումներ, տուգանքներ, հարկեր և այլն	11. 317.632.000	2.184.871.042
II	Եկամուտների կորուստներ, նպաստներ քաղաքացիական բնակչությանը, փախստականների ներգաղթ և այլն	1.080.000.000	208.494.208
III	Փոխհատուցում քաղաքացիական վնասների և մահերի	6.108.350.000	1.179.218.146
IV	Փոխհատուցում ռազմական բնույթի վնասների և մահերի	625.000.000	120.656.370

[20] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 501-502:

V	*Պատերազմական այլ ծախսեր*	-	-
VI	*Ընդհանուր պահանջը*	*19.130.982.000*	*3.693.239.766*

21

1919թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարություն տարածեց Միացյալ և Անկախ Հայաստանի մասին, որով հռչակվում էր Անդրկովկասի և Օսմանյան Թուրքիայի սահմաններում հայկական տարածքների միավորման ու անկախության մասին, և հանդիսանում է Միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն:

...1919թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի անկախության հռչակման առաջին տարեդարձի օրը, ինչպես արդեն նշվել է, Հայաստանի կառավարությունը հրապարակեց միացյալ և անկախ Հայաստանի անկախության հռչակագիրը՝ մեկ պետության մեջ միավորված հայտարարելով «Անդրկովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում գտնվող պապենական հայկական երկրները»: Դրան կանխավ իր հավանությունն էր տվել 1919թ. փետրվարին Երևանում կայացած արևմտահայերի երկրորդ համագումարը[22]:

Արևմտահայերի երկրորդ համագումարը տեղի ունեցավ Երևանում, 1919թ. փետրվարի 6-13-ը, Խորհրդի սրահում: Մասնակցում էին Հանրապետության տարբեր գաղթականական կենտրոններից շուրջ 50 պատգամավորներ, արևմտահայկական «Աշխատանք» և «Վան-Տոսպ» լրագրերի խմբագիրները, բարեգործական ու հայրենակցական ընկերությունների ներկայացուցիչներ և կառավարության անդամներ[23]:

Տաք վիճաբանություններ սկսեցին քաղաքական հանձնաժողովի առաջարկած բանաձևի նախագծի քննարկման ժամանակ. անհրաժեշտ եղան երկարատև մասնավոր խորհրդակցություններ և մի շարք փոփոխություններ, մինչև որ այն ընդունվեց փետրվարի 12-ին, համագումարի ավարտից մեկ օր առաջ: ...

«Արևմտահայ երկրորդ համագումարը, քննելով հայ ժողովրդի ներկա կացությունը՝

1. *Սրտագին կողջունե և կը հայտարարե Ազատ և Միացյալ Հայաստանի անկախությունը.*

---

[21] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 502-503:

[22] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտ, 2010թ., էջ 147:

[23] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 496:

2. *Լիակատար վստահություն կը հայտնե Ազատ և Միացյալ Հայաստանի Պողոս Նուբար փաշայի անդրանիկ դահլիճին (այդ օրերին լուրեր էին շրջում, որ Նուպարը Փարիզում կառավարություն է կազմել).*

3. *Կը հայտարարե իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մեկ միություն համազգային հատվածներու և երկրամասերու միավորությամբ.*

4. *Կը հանձնարարե ընտրված «Գործադիր մարմնին»՝ նախարարական դահլիճին (Պողոս Նուբարի) հետ անմիջական հարաբերության մեջ մտնել՝ իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկավոր են Ազատ և Միացյալ Հայաստանի պետական գոյությունը հիմնավորելու համար.*

5. *Կը թելադրե ընտրված «Գործադիր մարմնին»՝ գործնական քայլեր առնել միաժամանակ Արարատյան (Երևանի) Հանրապետության նախարարության և խորհրդարանի հետ՝ Միացյալ, Ազատ Հայաստանի անկախությունը հայտարարելու և իր մասնակցությունը բերելու գոյություն ունեցող պետական և օրենսդրական հաստատություններու մեջ՝ համազգային միությունը իրականացնելու համար.*

6. *Կը պահանջե Ազատ և Միացյալ Հայաստանի պետական գոյության երաշխավորումը՝ Դաշնակից պետություններու քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակությամբ և աջակցությամբ.*

7. *Կը պահանջե Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ և պատասխանատու հրեշներուն՝ (կայզեր) Վիլհելմի, Էնվերի, Թալեաթի, Ջեմալի, Նազըմի, Պեհաէտտին-Շաքիրի և ընկեր նահանգապետներու, կառավարիչներու և բոլոր ղեկավարներու զինվորական դատարանով պատժվիլը.*

8. *Կը պահանջե հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիվ օսմանյան կառավարության»[24]:*

---

[24] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 497-498:

Մինչ արևմտահայ համագումարները Երևանում և Փարիզում ընդունում էին զանազան տարբեր քաղաքական որոշումներ, Ալեքսանդր Խատիսյանի կառավարությունը, մշակելով իր սեփական միջոցառումները, Հանրապետության առաջին տարեդարձին պատրաստվում էր հռչակել Հայաստանի պաշտոնական միացումը: Միջոցառումների հանձնախմբի նախագահ Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը դիմեց քաղաքացիներին՝ տոնակատարությունը դարձնել անմոռանալի հավերժացումն այն իրողության, որ դարավոր մարտիրոսությունից հետո, 1918թ. մայիսի 28-ին, հայոց ազգը վերջապես դառնում է անկախության վերածննդի ականատեսը[25]:

Հանդիսությունը, որին նախագահում էր Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը, բացվեց «Մեր հայրենիք» ազգային հիմնով և մեկ րոպե լռությամբ ի հիշատակ նրանց, ովքեր ընկել էին Հայաստանի անկախության ճանապարհին: Այնուհետև Ալեքսանդր Խատիսյանը մոտեցավ ամբիոնին՝ Միացյալ Հայաստանի՝ անհամբերությամբ սպասված ակտը ընթերցելու.

«Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումը ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբր անկախ պետական միություն:

Ուղիղ մի տարի առաջ, ռուսահայերի համագումարից ընտրված Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց իրեն անդրկովկասյան հայկական գավառների բարձրագույն իշխանություն: Ազգային խորհրդի կազմված կառավարությունն այդ քաղաքական ակտի մասին պաշտոնապես պետությանց ներկայացուցիչներին հայտնելուց հետո, այս մի տարվա մեջ փաստորեն հաստատել է իր իշխանությունն Անդրկովկասի հայկական գավառներում:

1919թ. փետրվար ամսին Երևան քաղաքում կայացած Արևմտահայ Երկրորդ Համագումարը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ նա Հայաստանը Միացյալ և Անկախ է ճանաչում:

Այժմ, Անդրկովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում գտնված պապենական հայկական երկիրների միացման և անկախության այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ Միացյալ Հայաստանի պետական ձևն է ռամկավար հանրապետություն և որ ինքը հանդիսանում է Միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[25] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 505-506:

Այսպիսով, ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագույն տերն ու տնօրենը, և Հայաստանի պառլամենտն ու կառավարությունը հանդիսանում են Միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը:

Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրապարակում է 1919թ. ապրիլի 27-ի պառլամենտի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա.

Մինիստրների խորհրդի նախագահի և	
արտաքին գործոց մինիստրի պաշտոնակատար	*Ալ. Խատիսյան*
Ներքին գործոց մինիստրի պաշտոնակատար	*Ս. Մանասյան*
Զինվորական մինիստր, գեներալ մայոր	*Ք. Արարատյան*
Արդարադատության մինիստրի պաշտոնակատար	*Հ. Չմշկյան*
Հանրային կրթության մինիստր	*Գ. Մելիք-Ղարագյոզյան*
Խնամատարության մինիստր	*Ս. Թորոսյան*
Պարենավորման մինիստր	*Ք. Վերմիշյան*
Ֆինանսների մինիստրի պաշտոնակատար	*Գ. Ջաղեթյան*
Գործերի կառավարիչ	*Գ. Խատիսյան*

1919թ. մայիսի 28-ին, Երեւան քաղաք»[26]*:*

1920թ. ապրիլին Սան Ռեմոյի կոնֆերանսում քննարկվեց նաև Հայաստանի հարցը և որոշում ընդունվեց, որ Արևմտյան Հայաստանից միայն որոշ շրջաններ (Վան, Էրզրում, Բիթլիս, Տրապիզոն) կարող են միացվել Հայաստանի Հանրապետությանը՝ այդ հարցում դիմելով ԱՄՆ

[26] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 507-508:

նախագահին և համաձայնվելով նրա որոշմանը, որում արտացոլված կլինի նաև Հայաստանի՝ դեպի ծով ելք ունենալու հնարավորությունը:

1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում ստորագրվեց Հաշտության պայմանագիր սուլթանական Թուրքիայի և Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած դաշնակից պետությունների միջև, համաձայն որի՝ Հայաստանին են անցնում Վանի, Էրզրումի, Բիթլիսի և Տրապիզոնի նահանգները, իսկ նշյալ նահանգներում երկու երկրների սահմանազատումը թողնվում էր ԱՄՆ որոշմանը, և Հայաստանն ու Թուրքիան համաձայնվում են ընդունել ինչպես այդ, այնպես էլ Հայաստանին դեպի ծով ելք տալու որոշումը: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը, իր նշանակած հանձնաժողովի ուսումնասիրությունները հաշվի առնելով, նույն թվականի նոյեմբերին եվրոպական տերություններին է հանձնում իր որոշումը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությանը պետք է միացվեին գրեթե ողջ Էրզրումի նահանգը, Տրապիզոնի նահանգի մեծ մասը՝ ներառյալ նավահանգիստը, Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը, ընդհանուր առմամբ՝ շուրջ 90 հազար քառ. կմ: Այդպիսով՝ Սևրի հաշտության պայմանագրով՝ Հայաստանի Հանրապետության տարածքն ընդգրկելու էր շուրջ 160 հազար քառ. կմ և ելք դեպի Սև ծով:

Հայաստանին անկախություն տալու գաղափարը վաղուց էր համակել նախագահ Վ. Վիլսոնին: Դեռևս 1917թ. հունիսին նա գրել է. «Երբ ավարտվի պատերազմը, կան երկու երկրներ, որոնք երբեք չեն վերադարձվի մահմեդական լծի տակ: Մեկը քրիստոնյա Հայաստանն է, մյուսը՝ Պաղեստինը»[27]:

Հայաստանին ամբողջությամբ վերաբերում էին Սևրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժնի 88-93-րդ հոդվածները: 88-րդ հոդվածում նշվում էր, թե Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը՝ որպես ազատ և անկախ պետություն, ինչպես այդ արել են դաշնակից տերությունները: 89-րդ հոդվածով Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև պայմանավորվող մյուս կողմերը համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի նահանգներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել ԱՄՆ նախագահի իրավարարությանը և ընդունել նրա որոշումը, ինչպես նաև համաձայնում են այն բոլոր միջոցառումների հետ, որոնք նա կարող էր առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագիծը հատող օսմանյան ցանկացած տարածքներն ապառազմականացնելու

[27] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 148-149:

վերաբերյալ: Համաձայն պայմանագրի 90-րդ հոդվածի, սահմանագծի որոշման օրից սկսած՝ Թուրքիան հրաժարվելու էր Հայաստանին հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից[28]:

Այսպիսով՝ Միացյալ Հայաստանը Արևմտյան Հայաստանից պետք է ստանար Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը, Էրզրումի գրեթե ամբողջ նահանգը, Տրապիզոնի նահանգի մեծ մասը՝ ներառյալ նավահանգիստը: Ընդհանուր առմամբ այդ տարածքը կազմում էր 90 հազար քառ. կմ: Միավորվելով Անդրկովկասում արդեն գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության հետ, որի տարածքը կազմում էր 71.330 քառ. կմ, հայկական անկախ պետությունը կունենար 161.330 քառ. կմ ընդհանուր տարածք՝ դեպի Սև ծով ելքով:

Ինչպես Սևրի պայմանագիրը, այնպես էլ դրանից բխող՝ հայ-թուրքական սահմանի վերաբերյալ ԱՄՆ նախագահի իրավարարական որոշումը, որն, ի տարբերություն Սևրի պայմանագրի, վավեր էր ստորագրման և կնքման իսկ պահից, թեև չիրագործվեցին, այնուհանդերձ, դիվանագիտական այդ փաստաթղթերը Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն են:[29]

1921թ. փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնի կոնֆերանսում Ավետիս Ահարոնյանն ու Պողոս Նուբարը պահանջում են իրագործել Սևրի պայմանագրի՝ Արևմտյան Հայաստանին վերաբերող հոդվածները: Մինչդեռ եվրոպական տերությունները՝ վերանայելով Սևրի պայմանագիրը, ընդամենը որոշում են ընդունում Թուրքիայի արևելյան նահանգների սահմաններում ճանաչել հայերի՝ «Հայկական ազգային օջախ» ունենալու իրավունքը, ինչը, սակայն, ևս մերժվում է թուրքական պատվիրակության կողմից:

Կոնֆերանսում հանդես եկան հայկական պատվիրակությունների ղեկավարներ Պողոս Նուբար փաշան և Ա. Ահարոնյանը: Պողոս Նուբարը պաշտպանում էր Սևրի պայմանագիրը, որը նախատեսել էր ստեղծել միացյալ և անկախ Հայաստան՝ Թուրքիայի չորս արևելյան նահանգների այն սահմաններով, որ որոշվել էր իրավարար ճանաչված ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի կողմից: Հայաստանի խորհրդայնացումը, ըստ Պողոս Նուբարի, չէր կարող խոչընդոտել «թուրքական չորս վիլայեթներն ազատագրելու» համար:

---

[28] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 158:

[29] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 164:

Ա. Ահարոնյանը հանդես եկավ Սևրի պայմանագրով ճանաչված հայկական պետության անունից, պետություն, որը իրադարձությունների զուգադիպությամբ տվյալ պահին վերականգնվել էր Երևանում (1921թ. Փետրվարյան ապստամբությամբ): … Օսմանյան և քեմալական կառավարությունների միացյալ պատվիրակությունը մերժեց հայկական առաջարկությունները:

Ստեղծված պայմաններում Լոնդոնի կոնֆերանսը բավարարվեց Թուրքիայի արևելյան նահանգներում «հայկական օջախ» ստեղծելու՝ Թուրքիայի վրա որևէ պարտավորություն չդնող անորոշ առաջարկությամբ («Հայկական ազգային օջախի» ստեղծման գաղափարը ծագել էր ԱՄՆ հայասերների միջավայրում և դիվանագիտական շրջանառության մեջ դրվել Եվրոպայում):

Այսպիսով՝ Լոնդոնի կոնֆերանսում արևմտյան տերությունները հայկական պետություն ստեղծելու մասին որոշումը (Սևրի պայմանագիր) դրեցին մի կողմ և այն փոխարինեցին «հայկական օջախի» մասին որևէ բան չխոստացող հայտարարությամբ, որը ևս մերժվեց Թուրքիայի կողմից[30]:

1922-1923թթ. Լոզանի կոնֆերանսում հայկական կողմը ներկայացրեց մի հուշագիր, որով առաջարկվում էր Հայկական հարցի լուծման երեք տարբերակ՝ **ա)** «Հայկական ազգային օջախի» ստեղծում ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի սահմանազծած Հայաստանի տարածքում, **բ)** Երևանի հանրապետության տարածքների ընդարձակում՝ նրան միացնելով Արևմտյան Հայաստանի մի մասը՝ դեպի Սև ծով ելքով, **գ)** հակառակ դեպքում՝ Կիլիկիայում Հայկական ազգային օջախի ստեղծում: Հուշագիրը որևէ արդյունք չի տալիս, և Հայկական հարցը փոխակերպվում է «հայ գաղթականության» հարցի ու փոխանցվում Ազգերի լիգային, քանի որ Թուրքիան մերժում է բազմահազար հայ գաղթականներին հայրենիք վերադառնալ:

Լոզան ժամանած հայկական երկու պատվիրակությունները, դառնալով մեկ ընդհանուր պատվիրակություն՝ Գաբրիել Նորատունկյանի գլխավորությամբ, կոնֆերանսին ներկայացրին համատեղ հուշագիր, որում առաջարկվում էր Հայկական հարցի լուծման երեք տարբերակ. ստեղծել «Հայկական ազգային օջախ»՝ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի որոշած Հայաստանի տարածքի սահմաններում: Ընդարձակել Երևանի հանրապետության (Խորհրդային Հայաստանի)

---

[30] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 647:

տարածքը ի հաշիվ Արևմտյան Հայաստանի հողերի մի մասի՝ ելքով դեպի Սև ծով: Կիլիկիայում ստեղծել «Հայկական ազգային օջախ»[31]:

Վերջապես, Թուրքիայի հետ դաշնակից երկրների՝ Լոզանում ընդունած Հաշտության պայմանագիրը, որը, փաստորեն, Հայաստանի համար նշանակում էր Սևրի պայմանագրի վերացում, արձանագրեց ընդամենը Թուրքիայի ազգային փոքրամասնությունների մասին ընդհանուր հայտարարություններ: Նրանում չէին հիշատակվում անգամ «Հայաստան» ու «հայեր» բառերը[32]:

Հայկական հարցը Լոզանում նենգափոխվեց Հայկական ազգային օջախի ստեղծման ծրագրի, որն առաջարկվում էր իրականացնել Արևմտյան Հայաստանի որոշ մասում: Թուրքիան կտրականապես մերժեց օջախի ծրագիրը: Հայկական օջախը, ճիշտ է, Սևր չէր, այնուամենայնիվ, ինչ-որ բան էր, որը հնարավորություն կտար ցեղասպանված արևմտահայության բեկորներին բնակություն հաստատելու հայրենիքի թեկուզ մի մասում և պահպանելու այն: Սակայն Թուրքիան վճռականապես մերժեց նաև դա՝ պնդելով, թե իրենց համար Հայկական հարց գոյություն չունի:

Լոզանում Թուրքիայի համար բարենպաստ Հաշտության պայմանագրի կնքումը և ընդհանրապես ձեռք բերած հաջողությունները Գ. Չիչերինը գնահատում էր որպես «Խորհրդային դաշնության բոլոր ժողովուրդների հաղթարշավ», «վերջնական հրաժարում անարդարացի Սևրի պայմանագրից»: Ընդ որում՝ Մոսկվայում թուրքական դեսպանին ուղղված այդ նույն հայտագրում ԽՍՀՄ արտգործժողկոմը «ջերմ ողջույններ» էր ուղարկում Մոսկվայի «պատմական պայմանագիրը» ստորագրած թուրքերին[33]:

Արևմուտքի անտարբեր վերաբերմունքի պայմաններում Հայաստանի Հանրապետությունը բաժանվեց արևմտահայության նկատմամբ ցեղասպանություն իրականացրած Օսմանյան կայսրության իրավահաջորդ քեմալական պետության և նրա հետ գործարք ու դաշինք հաստատած Խորհրդային Ռուսաստանի միջև: Վ. Լենինի կառավարությունը հայկական հողերը, հանուն այդպես էլ չիրականացած համաշխարհային սոցիալիստական հեղափոխության, նվիրաբերեց ցեղասպան Թուրքիային, որին համաշխարհային հասարակայնությունը

---

[31] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 648:

[32] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 649:

[33] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 650:

դատապարտում և պատասխանատու էր համարում կատարած հանցագործության համար: 1921թ. մարտին Մոսկվայի պայմանագրով, Հայաստանի հաշվին նոր հողային զիջումներ անելով Թուրքիային՝ Խորհրդային Ռուսաստանը հերթական ու վճռական հարվածը հասցրեց Հայկական հարցին[34]:

1945թ., Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, հայ մտավորականները բարձրացնում են Թուրքիայի բռնազավթած հայկական հողերի ազատագրման հարցը, իսկ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքչյանը կոնդակով դիմում է ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարներին՝ հայկական տարածքները Թուրքիայից հետ ստանալու խնդրով: Սփյուռքը հետևողականորեն բարձրաձայնում է հայկական բռնազավթված տարածքների վերադարձի հարցը: 1947թ. Նյու Յորքում սփյուռքահայությունը գումարում է Համաշխարհային հայկական կոնգրեսի առաջին նիստը, որին մասնակցում են 22 երկրների ավելի քան 700 պատվիրակ, ովքեր խնդրագրերով դիմում են գերտերությունների ղեկավարներին և Միավորված ազգերի կազմակերպությանը (ՄԱԿ)՝ պահանջելով Հայկական հարցի ամբողջական լուծում:

1945-1947թթ. եղել է հուժկու շարժում Կարսի և Արդահանի հետ վերադարձի վերաբերյալ, որը հովանավորվում էր ԽՍՀՄ ղեկավարության կողմից, և տարածում էր գտել ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքի բազմաթիվ գաղթօջախներում:

Հայ ժողովրդի շրջանում մեծ հույսեր արթնացրեց պատերազմի ավարտից անմիջապես հետո խորհրդային ղեկավարների կողմից Հայկական հարցի բարձրացումը Պոտսդամի (Բեռլինի) կոնֆերանսում (1945թ.): Սակայն ԽՍՀՄ դաշնակից երկրների (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ) ղեկավարները հանդես եկան հայկական հողերի զգալի մասը բռնազավթած Թուրքիայի պաշտպանության դիրքերում: Ընդ որում՝ այսօր հայտնի է, որ խորհրդային ղեկավարությունը 1945-1946թթ. ձգտել է իրականացնելու հայկական հողերի ազատագրումը[35]:

Հայկական հողերի պահանջատիրությամբ 1945-1946թթ. հանդես եկավ սփյուռքահայությունը, եղան բազմաթիվ դիմումներ ՄԱԿ-ին, մեծ տերությունների ղեկավարներին և այլուր:

---

[34] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 646:

[35] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 6:

Նախաձեռնություն հանդես բերեց նաև ՀԽՍՀ ղեկավարությունը: Հայկական հարցի լուծման ակնկալիքով էր, որ կազմակերպվեց 1946-1948թթ. «մեծ հայրենադարձությունը»[36]:

<u>Կիլիկիա</u>

Կիլիկիան, ինչպես ողջ Հայկական լեռնաշխարհը, եղել է հայկական հայաբնակ տարածք:

Մ.թ.ա. մոտ 85թ. Դաշտային Կիլիկիան Ասորիքի, Փյունիկիայի ու Կոմագենեի հետ նվաճվել է հայոց արքա Տիգրան II-ի կողմից…: Այսպիսով, Կիլիկիան ժամանակին եղել է ոչ միայն ընդարձակ և Հայաստանին սահմանակից ու կարճ ժամանակով մտել է Տիգրան II-ի հայկական պետության սահմանների մեջ, այլև Հայաստանի և բուն Կիլիկիայի միջև գտնվել են հայաբնակ մարզեր (Փոքր Հայք, Կապադովկիա, Կոմագենե և այլն)[37]:

Կիլիկյան Հայաստանը մոտ 500 կմ երկարությամբ ծովափ ուներ[38]:

XIII դարում՝ իր սահմաններից դուրս Կիլիկիայի հայկական պետության առավելագույն ընդարձակման ժամանակաշրջանում, նրա տարածքը հավասարվել էր 40 հազար քառ. կմ-ի, իսկ բնակչությունը, հավանաբար, 1 միլիոնի[39]:

Կիլիկիայում հայկական պետականության երեքհարյուրամյա գոյության ժամանակաշրջանը (1080-1375թթ.) ոչ միայն եղել է հայ ժողովրդի քաղաքական անկախության և զարգացման շրջան, այլև հանդիսացել է իր պատմական հայրենիքում անկախ պետականությունը վերականգնելու վկայություն:

Կիլիկիան իր անկախության անկումից հետո էլ շարունակել է մնալ հայկական հայաբնակ միավոր, որը XX դարի սահմանագծում ձգտել է վերականգնել իր անկախությունը, ինչի քաղաքական և իրավական արտացոլումների որոշ նկարագրությունը տրվում է ստորև:

Թեև թուրքերը Կիլիկիայում փոքրամասնություն էին, ինչպես Օսմանյան ամբողջ կայսրության մեջ, նրանք մեծամասնություն էին կազմում, երբ հաշվվում էին մահմեդական մյուս ժողովուրդների հետ միասին, ինչպիսիք էին քրդերը, անսարները, չերքեզները, ղրզըլբաշներն ու թուրքմենները: Բոլոր այս տարրերը թուրքերի դեմ ոխ ունեին, սակայն կիսում էին այն

---

[36] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 6:
[37] Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, © ԵՊՀ-ի հրատարակչություն, 2007 թ., էջ 7-8:
[38] Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, © ԵՊՀ-ի հրատարակչություն, 2007 թ., էջ 13:
[39] Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, © ԵՊՀ-ի հրատարակչություն, 2007 թ., էջ 17:

մտավախությունը, որ Կիլիկիան կարող է հայկական կենտրոն դառնալ: Մահմեդականներից շատերն, ովքեր վճարել էին տեղահանված հայերի տներին ու գույքին տիրանալու իրավունքի համար, հիմա իրենք էին կանգնած ունեցվածքից զրկվելու վտանգի առջև[40]:

1916թ. մայիսի 16-ին Լոնդոնում ստորագրված Սայքս-Պիկոյի պայմանագրով դրվեց Թուրքիայի մասնատման սկիզբը: Այն բնորոշում էր բրիտանական և ֆրանսիական հետաքրքրությունները՝ որպես Թուրքիայի ցանկալի մասնատում, ըստ որի՝ Տյուրոսից մինչև Ալեքսանդրետ ձգվող ծովամերձ շրջանը, Կիլիկիան, Հարավային Հայաստանը գերիշխանության իրավունքով անցնում էին Ֆրանսիային[41]:

1916թ. հոկտեմբերին Ֆրանսիայի իշխանությունները և Պողոս Նուբար փաշան համաձայնության եկան Հայկական լեգեոն կազմավորելու վերաբերյալ, որի օգնության դիմաց Ֆրանսիան պարտավորվում էր Կիլիկիային ինքնավարություն շնորհել: Հիմնականում եգիպտահայերից և մուսալեռցիներից ձևավորված 4000-անոց Հայկական լեգեոնը մարտնչում է Սիրիայում, Պաղեստինում, Լիբանանում, մասնակցում է Կիլիկիայի ազատագրմանը՝ ապահովելով դեպի Կիլիկիա բազմահազար հայերի վերադարձը: 1920թ. Ֆրանսիան կազմալուծում է Հայկական լեգեոնը:

1916թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանատանը Մարկ Սայքսը և Ժորժ Պիկոն հայ ազգային պատվիրակության ղեկավար Պողոս նուբար փաշային տեղեկացնում են, որ Կիլիկիան և Հարավային Հայաստանն անցնում են Ֆրանսիայի գերիշխանության ներքո: Նշվում է նաև մոտ ապագայում ստեղծվելիք արևելյան լեգեոնի կազմում հայ մարտիկների մասնակցության կարևորության մասին: … Այնուհետև կնքվում է համաձայնագիր, ըստ որի՝ հայ կամավորները մարտնչելու են միայն թուրքական ճակատում՝ մայր հողի ազատագրության համար, իսկ Ֆրանսիան ապահովելու է Կիլիկիայի ինքնավարությունը:

Խանդավառված մոտալուտ անկախության կամ ինքնավարության ձեռքբերմամբ՝ հայերն սկսեցին անդամագրվել արևելյան լեգեոնին, որի առաջին մարտիկներից էին Մուսա լեռան կռիվներում կռփված ռազմիկները: 1918թ. սեպտեմբերի 19-ին տեղի ունեցած Արարայի

---

[40] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր II, Վերսալից-Լոնդոն, 1919-1920, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2014, էջ 502:

[41] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 218:

ճակատամարտում դաշնակիցների տարած հաղթանակում մեծ ավանդ ներդրեց Հայկական լեգեոնը…[42]:

1918թ. հոկտեմբերի 30-ին դաշնակիցների և Օսմանյան Թուրքիայի միջև Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում կնքված զինադադարի 16-րդ հոդվածով նախատեսված էր թուրքական զորքերի դուրսբերումը Կիլիկիայից:

1919 թվականին Կիլիկիան միակ շրջանն էր, ուր մեծ թվով հայեր էին հայրենադարձվել: … Պատերազմի վերջում սկսված անկանոն հայրենադարձությունը մեծածավալ շարժման վերածվեց 1919թ. գարնան ու ամռան ընթացքում: Մինչև 1920 թվականի սկիզբը, ըստ զեկույցների, 150 հազար հայ էր վերադարձել Ադանայի վիլայեթ և հարևան Այնթապի ու Մարաշի սանջակները: … Դեպի Կիլիկիա հոսքն այնքան ծավալուն էր, որ, օրինակ, Դամասկոսի շուրջ գտնվող 23 հազար գաղթականներից սեպտեմբերին միայն 500 մարդ էր մնացել այնտեղ: Այդ ընթացքում Զեյթունի ու Հաճընի վերապրողները նույնպես վերադարձան լեռնային իրենց բնակավայրերը, թեև, թշնամական գործողությունները վերսկսվելու դեպքում, Մարաշից ու Սիսից շատ քիչ օգնություն հնարավոր կլիներ ակնկալել[43]:

Մուդրոսի զինադադարից հետո հազարավոր հայեր վերադարձել էին Կիլիկիա՝ աշխատելով շենացնել իրենց ավերված ու թալանված օջախները: … Բազմաթիվ աղբյուրների հավաստմամբ՝ հայերը կազմում էին բնակչության հարաբերական մեծամասնությունը, ընդ որում, այդ տվյալները վերաբերում են միայն Ադանայի վիլայեթին, իսկ Մարաշի սանջակում հայ ազգաբնակչության թվաքանակը հասնում էր մոտ 30 հազարի (որից 6-8 հազարը՝ Մարաշ քաղաքում): Այսպիսով՝ ամենահամեստ հաշվումներով անգամ, 1919թ. հայերի թվաքանակը Կիլիկիայում անցնում էր 150 հազարից[44]:

1919թ. հունվարի 30-ին Փարիզում տեղի ունեցած ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչների խորհրդակցությունում որոշում ընդունվեց, որ Փարիզի վեհաժողովի նպատակն է թուրքական կայսրության որոշ տարածքներ, այդ թվում Հայաստանը (ներառյալ Կիլիկիան) դնել առանձին պետությունների հովանավորության ներքո, որոնք պետք է գործեին որպես Ազգերի լիգայի մանդատատերեր: Այդ որոշման 2-րդ կետում

---

[42] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտ, 2010թ., էջ 219:

[43] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր II, Վերսալից-Լոնդոն, 1919-1920, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2014, էջ 497:

[44] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտ, 2010թ., էջ 221:

մասնավորապես նշվում է. «Մի շարք պատճառներով և հատկապես սուբյեկտ հանդիսացող ժողովուրդների՝ թուրքերի կողմից պատմականորեն սխալ կառավարման և վերջին տարիներին հայերի և այլոց սարսափելի կոտորածների պատճառով դաշնակից և միացյալ տերությունները համաձայն են, որ Հայաստանը (և այլ տարածքներ – խմբ.) պետք է ամբողջապես անջատվեն թուրքական կայսրությունից...»[45]*:*

1919թ. փետրվարի 16-ին Ֆրանսիայի նախագահ Ռ. Պուանկարեն նամակ է հղում Կիլիկիայի հոգևոր իշխանություններին. «Հանրապետության կառավարությունը տեղյակ է այն հույսերին, որ ունեն Կիլիկիայի հայերը Ֆրանսիայի նկատմամբ, և վստահեցնում է, որ Ֆրանսիան արդարացնելու է այդ հույսերը»[46]*:*

Հայ հասարակական-քաղաքական գործիչ Միհրան Տամատյանը, որպես Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ, ընդգրկվել է Պողոս Նուբարի գլխավորած ազգային պատվիրակության կազմում: Նա նպաստել է Կիլիկիայում հայկական ինքնավար պետության ստեղծման փորձերին:

Մ. Տամատյանի առաջնորդությամբ 1920թ. օգոստոսի 4-ին Հայոց ազգային միության անդամները, ազգային բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, քրիստոնյա համայնքների ղեկավարները ֆրանսիական վերահսկողության վարչության ղեկավար Է. Բրեմոնին են հանձնում Ֆրանսիայի գերիշխանության ներքո Կիլիկիայի «անկախ» քրիստոնեական հանրապետության հռչակման մասին հայտարարությունը, որում մասնավորապես նշվում էր. «...հիմնուելով մանաւանդ ամէն ժողովուրդի իր ճակատագիրը ինք որոշելու անկապտելի իրաւունքին վրայ, որի աղբիւրը ունի ֆրանսական յեղափոխութեան անմահ սկզբունքներուն մէջ, ...մենք հանդիսաւորապէս կը յայտարարենք թէ՝ Կիլիկիան այս օրէն սկսեալ ազատ երկիր մըն է՝ Թուրքիայէն բոլորովին անկախ, օժտուած տեղական քրիստոնեայ ինքնավարչությամբ մը եւ դրուած ֆրանսական հոգատարութեան ներքեւ...»[47]:

Այն պայմաններում, երբ տեղի էր ունենում ֆրանս-քեմալական մերձեցումը, երբ Կիլիկիայի ճակատագիրը դաշնակից պետությունների կողմից փաստորեն վճռվել էր Սան Ռեմոյի կոնֆերանսում և Սևրում ընթացող բանակցություններում, երբ երազանքը մոտ էր թվում իրականությանը և անսպասելիորեն դառնում անհաս, կիլիկիահայության առաջնորդներին

---

[45] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 143-144:

[46] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 221:

[47] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 222:

մնում էր միայն մեկ միջոց, որին էլ նրանք դիմեցին՝ հոչակել Կիլիկիայի ինքնավարությունը և, ինչպես նշվեց, աշխարհին կանգնեցնել կատարված փաստի առաջ[48]:

1909թ. երիտթուրքերի իշխանությունը Կիլիկիայի բնակչության մեծամասնություն կազմող շուրջ 500 հազար հայերի նկատմամբ իր ցեղասպան քաղաքականության առաջին փորձն է ձեռնարկում, որին զոհ են գնում տասնյակ հազարավոր հայեր:

1919-1921թթ. Կիլիկիայում քեմալականների սանձազերծած պատերազմի հետևանքով տասնյակ հազարավոր կիլիկիահայեր են կոտորվում Մարաշում, Հաճընում, Այնթապում, Զեյթունում: Կիլիկիահայությունը ֆրանսիացիների մասնակի օգնությամբ կազմակերպում է ինքնապաշտպանական մարտեր և տեղ-տեղ փրկվում, ինչից հետո, սակայն, ստիպված է լինում գաղթել հայրենի օջախներից:

Ավելի ուշ, երբ 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված պայմանագրով Ֆրանսիան Կիլիկիան վերջնականապես հանձնեց Թուրքիային, զեյթունցիները ևս, թուրքական յաթաղանից փրկված կիլիկիահայության հետ միասին, հեռացան հայրենի երկրից[49]:

1895-1896 - Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ավելի քան 300 հազար հայերի ոչնչացումը սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարության կողմից:

1909 - Հայերի կոտորածը Կիլիկիայի քաղաքներում, գլխավորապես Ադանայում («Ադանայի կոտորածը»), որի զոհերը դարձան 30 հազար հայեր:

1915-1916 - Թուրքական կառավարության կազմակերպած, կայզերական Գերմանիայի կողմից ղեկավարվող հայերի զանգվածային կոտորածները Հայաստանում, Փոքր Ասիայում և Կիլիկիայում, որի հետևանքով ոչնչացվեց մոտ մեկուկես միլիոն հայ և նույնքան էլ ցրիվ եկան աշխարհով մեկ:

1916 - Հայերի բռնագաղթը Կիլիկիայից: Մի մասը ամրացավ լեռներում:

1918-1919 - Հայերի վերադարձը Կիլիկիա:

---

[48] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 223-224:

[49] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 231:

1921 հոկտեմբեր - Անկարայի պայմանագրի կնքումը, ըստ որի Ֆրանսիան Կիլիկիան հանձնեց Թուրքիային:

1921-1922 - Ֆրանսիական զորքերի կողմից Կիլիկիան լքելը և կիլիկեցի հայերի կովով նահանջելը դեպի Սիրիա:

1946-1948 – Սիրիայից և այլ երկրներից կիլիկեցի հայերի մի մասի ներգաղթը Հայկական ԽՍՀ[50]:

<u>Արևելյան Հայաստան</u>

Թեև ռուսական մեկդարյա իշխանությունը մի որոշ ընդհանուր համակարգ էր մտցրել Անդրկովկասում, ազգային ու կրոնական առանձնահատկությունները, սակայն, համառորեն հարատևում էին և, ժամանակ առ ժամանակ համաձուլման դեմ ուժեղ դիմադրություն էր պոռթկում: Տեղական ազգային-կրոնական համախմբումը թուլացնելու հաշվարկումով ցարական կառավարությունը գծում և վերագծում էր ներքին սահմանները, հաճախ մեկ նահանգում միավորելով տարբեր ժողովուրդներ և հակադիր տեղագրական կազմավորումներ: Այսպիսի քաղաքականության հետևանքը Անդրկովկասում, որն արդեն իսկ ազգագրական խճապատկեր էր, եղավ ազգերի էլ ավելի մեծ խճողումը: Առանձին նահանգների 1916թ. պաշտոնական ժողովրդագրական վիճակագրությունը (աղյուսակ 1) բացահայտում է իրադրության բարդությունը: Աղյուսկի թվերը ցույց են տալիս հասունացած մրցակցության պատճառը Վրաստանի ու Հայաստանի միջև՝ Թիֆլիսի նահանգի մասերի, և Ադրբեջանի ու Հայաստանի միջև՝ Ելիզավետպոլի և Երևանի նահանգների սահմանային տարածքների հարցում[51]:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Անդրկովկասի նահանգների ազգաբնակչությունը 1916 թվականին

Նահանգ	*Ամբողջ ազգաբնակչություն*	*Շիա մահմեդականներ (գլխավորապես թաթար)*	*Սունի մահմեդականներ (թուրք-թաթար)*	*Քրդեր (մահմեդական և եզիդի)*	*Հայ*	*Վրացի*	*Ռուս*	*Այլ քրիստոնյաներ*
Կարս	*364.000*	*19.000*	*83.000*	*68.000*	*118.000*	*-*	*19.000*	*18.000[ա]*
Բաթում	*123.000*	*700*	*14.000*	*600*	*15.000*	*79.000[բ]*	*9.000*	*3.000*

[50] Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, © ԵՊՀ-ի հրատարակչություն, 2007 թ., էջ 507-508:

[51] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 69-70:

Թիֆլիս	*1.473.000*	*39.000*	*129.000*	*56.000*	*411.000*	*580.000*	*150.000*	*40.000*
Քութայիս	*1.034.000*	*-*	*-*	*-*	*5.000*	*993.000*	*16.000*	*2.000գ*
Երևան	*1.120.000*	*336.000*	*9.000*	*55.000*	*670.000*	*400*	*16.000*	*4.000*
Ելիզավետպոլ	*1.275.000*	*478.000*	*305.000*	*4.000դ*	*419.999*	*1.000*	*37.000*	*18.000*
Բաքու	*1.281.000*	*583.000*	*293.000*	*700*	*120.000*	*10.000*	*177.000*	*12.000*

ա/Կարսում կային նաև 38 հազար գնչուներ: Վիճակագրությունը ոչ մի տվյալ չի պարունակում Օլթիի ազգաբնակչության՝ Կարսի չորս գավառներից ամենափոքրի մասին:

բ/Բաթումում (Աջարիա) ավելի քան 70 հազար վրացիներ մահմեդական էին:

գ/Քութայիսի նահանգում կային 18 հազար հրեաներ:

դ/Այլ աղբյուրներ ցույց են տալիս, որ Ելիզավետպոլի նահանգում կային 18 հազար քրդեր:[52]

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը

Անկախության խնդիրը քննարկվեց Հայոց ազգային խորհրդի մայիսի 28-ի նիստերում (առավոտյան և երեկոյան):

Հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, … մեկ անգամ ևս քննության առնվեց քաղաքական կացությունը և որոշվեց Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն[53]*:*

Միայն դրանից հետո՝ մայիսի 30-ին, Հայոց ազգային խորհուրդը կատարեց վճռական քայլը. որոշեց հայտարարություն անել Հայաստանի անկախության մասին: … Հռչակագրում ասվում էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»:

…Հռչակագրում հեռատեսորեն մատնանշվում է «հայկական գավառներ» հասկացությունը, որի տակ կարելի է հասկանալ Անդրկովկասի նահանգներում գտնվող հայաբնակ բոլոր գավառները, այդ թվում նաև Նախիջևանը, Զանգեզուրը, Ղարաբաղը, Գանձակի հայկական շրջանները,

---

[52] Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, © Հովհաննիսյան Ռ.Գ, 2005, էջ 71:

[53] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 15:

Լոռին, Ջավախքը, թուրքական զորքերի կողմից ռազմակալած Երևանի նահանգի մի շարք գավառներ, Կարսի մարզը և հայկական այլ տարածքներ [54]:

Ակներև է, որ եթե Հայոց ազգային խորհուրդը տվյալ պահին իրեն չհայտարարեր հայկական գավառների գերագույն իշխանություն, ապա հայկական գավառները պարզապես բաժին կդառնային հարևան թուրքերին, ադրբեջանցիներին և վրացիներին [55]:

Այդ օրերին հայ ժողովուրդն ունեցավ իր երկրորդ Ավարայրը: Նրա բազմադարյա պատմության մեջ տեղի ունեցան ամենավճռական ու բախտորոշ հերոսամարտերը՝ Սարդարապատը, Բաշ Ապարանը և Ղարաքիլիսան: Այդ կռիվներում հայերը կարողացան գերմարդկային ճիգերով թշնամուն արժանի հակահարված տալ և վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու և տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը: Ավելին՝ Մայիսյան հաղթական հերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի անկախության համար, քանի որ այդ հաղթանակները ստիպեցին հակառակորդին հաշվի նստել հայ ժողովրդի կամքի հետ և ճանաչել նրա անկախ ապրելու իրավունքը:

1918թ. հունիսի 13-ին նորընտիր վարչապետ Հ. Քաջազնունին ի լուր աշխարհի պաշտոնապես հայտարարություն արեց Հայաստանի անկախության մասին[56]:

1918 թվականի Բաթումի պայմանագիրը

Մայիսի 30-ին սկսվեցին հայ-թուրքական անջատ բանակցությունները: Հայկական կողմը թուրք պատվիրակության նախագահին իրազեկեց, որ Հայաստանը հռչակել է իր անկախությունը և ինքը հանդես է գալիս նորանկախ հանրապետության անունից՝ հանձին կառավարության իրավասություններ ստանձնած Հայոց ազգային խորհրդի:

Բանակցությունների առաջին իսկ նիստում քննարկման նյութ դարձավ սահմանների խնդիրը: Թուրքական կողմը պնդեց, որ ընդունվի իրենց պայմանագրի նախագիծը, որով Հայաստանի Հանրապետությանը փաստորեն թողնվում էր մի անձուկ տարածք:

---

[54] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 16:

[55] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 17:

[56] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 18:

Ըստ այդ սահմանի՝ թուրքերին անցնում էր ամբողջ Կարսի մարզը, Ախալքալաքի գավառը, Ալեքսանդրապոլ քաղաքը, Սուրմալուի գավառը, Երևանի, Էջմիածնի և Նախիջևանի գավառների զգալի մասը, Համամլու-Երևան խճուղին, Ղարաքիլիսա-Ուլուխանլու (Մասիս) ամբողջ երկաթուղին և այլն[57]:

Ի վերջո, Հայաստանի պատվիրակությունը ստիպված համաձայնություն տվեց նախագծին[58]:

Այսպիսով՝ Բաթումի կողոպտիչ պայմանագրով Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև արևելահայ տարածքների զգալի մասը՝ Կարսը, Կաղզվանը, Արդահանը, Ախալքալաքը, Սուրմալուն, Նախիջևանը, ինչպես նաև Ալեքսանդրապոլ քաղաքը և Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի գավառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը և Շարուր-Դարալագյազի գավառի մեկ հինգերորդը: Հայաստանի Հանրապետությանը փաստացի մնում էր ընդամենը 10,3 հազար քառ. կմ տարածք, որն ընդգրկում էր Սևանա լճի ավազանը և Արարատյան դաշտի մի մասը:

Բաթումի դաշնագիրը նվաստացուցիչ էր հայ ժողովրդի ու նրա նորաստեղծ պետականության համար[59]:

Բաթումի պայմանագիրը միանշանակ չընդունվեց հայ գործիչների ու հասարակական-քաղաքական ուժերի կողմից: Ժողովրդական հերոս Անդրանիկը չճանաչեց Բաթումի պայմանագիրը: Նա հարկադրված էր իր արևմտահայ կամավորական ջոկատով հեռանալ Հայաստանի Հանրապետության սահմաններից դեպի Նախիջևան ու Սյունիք:... Պայմանագրին դեմ արտահայտվեցին լայն հասարակական շրջաններ: Երևանում և այլուր տեղի էին ունենում բազմամարդ ցույցեր, ժողովներ՝ ի նշան բողոքի:

Խնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից քննարկելու դեպքում պետք է նշել, որ պայմանագիրն իրավական ուժ չի ունեցել, քանի որ չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի կառավարությունների կողմից: Բաթումի պայմանագիրը չճանաչվեց Խորհրդային Ռուսաստանի, Անտանտի, Քառյակ միության երկրների և այլ պետությունների կողմից:

---

[57] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 22:

[58] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 23:

[59] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 25:

Բաթումի պայմանագիրն իր ուժը պահպանեց մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը՝ 1918թ. նոյեմբերը[60]:

1920 թվականի Ալեքսանդրապոլի պայմանագիրը

Նախապատրաստվելով Հայաստանի Հանրապետության վրա հարձակման՝ քեմալականներն իսկույն ևեթ դիվանագիտական լայն գործունեություն ծավալեցին ոչ միայն Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի աջակցությունն ապահովելու, այլև Հայաստանը դիվանագիտորեն մեկուսացնելու, հնարավոր դաշնակիցներից զրկելու համար[61]:

Նույն օրերին, երբ լուծվում էր թուրք-հայկական պատերազմ լինել-չլինելու հարցը, օգոստոսի 24-ին երկու պատվիրակությունների ղեկավարների կողմից նախաստորագրվեց ռուս-թուրքական բարեկամության պայմանագրի նախագիծը, որը համալրելու էր հայ ժողովրդի դեմ ուղղված քաղաքական փաստաթղթերի շարքը: Խոսքը միայն այն մասին չէ, որ Ռուսաստանը խոստանում էր ֆինանսական օգնություն և զենքի ու զինամթերքի մատակարարում, ինչը պակաս կարևոր չէր թուրքական ռազմամոլներին խրախուսելու գործում, այլև այն մասին, որ ճանաչելով թուրքական «Ազգային ուխտը»՝ Ռուսաստանը դրանով իսկ ընդունում էր Թուրքիայի իրավունքը Բաթումի, Կարսի ու Արդահանի վրա[62]:

Այսպիսով՝ Հայաստանը 1920թ. աշնան սկզբին երեք կողմից շրջապատված էր թշնամիներով, չորրորդ՝ հյուսիսային հարևանը վիճելի տարածքները ստանալու պայմանով համաձայնության մեջ էր մտել Հայաստանի ոխերիմ թշնամի քեմալական Թուրքիայի հետ[63]:

Պատերազմի առաջին իսկ օրերից Հայաստանի կառավարությունը կոչով դիմեց եվրոպական տերություններին՝ խնդրելով օգնություն հայ ժողովրդի գլխին կախված ահավոր վտանգը վերացնելու համար[64]:

Սակայն Եվրոպան դարձյալ խլանում է հայ ժողովրդի խնդրանքի հանդեպ[65]:

---

[60] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 26:

[61] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 249:

[62] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 252:

[63] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 253:

[64] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 257-258:

Կորցնելով թշնամուն դիմագրավելու բոլոր հույսերը՝ Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 3-ին որոշում է զինադադար խնդրել թուրքերից[66]:

Իր «դաշնակիցների» նյութական ու ռազմական աջակցությունից զրկված Հայաստանը զրկվեց նաև նրանց դիվանագիտական աջակցությունից[67]:

Կնքված պայմանագրի համաձայն՝ Հայաստանի և Թուրքիայի միջև պատերազմն ավարտված էր հայտարարվում (հոդված 1), իսկ սահմանը երկու երկրների միջև անցնում էր Արփաչայ և Արաքս գետերով (Թուրքիային էին անցնում Կարսի մարզը, Արդահանի շրջանը և Սուրմալուի գավառը): Նախիջևանի, Շարուրի և Շահթախթիի շրջանները հայտարարվում էին Թուրքիայի հովանավորության ներքո գտնվող տարածքներ, որտեղ հետագայում հանրաքվեի միջոցով պետք է հատուկ վարչություն հաստատվեր: Սակայն Հայաստանը զրկվում էր այդ վարչության գործունեությանը միջամտելու ամեն մի իրավունքից՝ անկախ նրանից, թե ինչ ձև է ընդունելու վարչությունը (հոդված 2)[68]:

Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիային էր անցնում Հայաստանի Հանրապետության տարածքից 20 700 քառակուսի կմ, իսկ երկիրն էլ կրելու էր ներքին ինքնուրույնության զգալի սահմանափակումներ: Անտարակույս, Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ըստ էության, ապօրինի էր և միջազգային իրավունքի տեսակետից որևէ նշանակություն չպետք է ունենար (ստորագրվել էր Երևանի՝ դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրով իշխանությունը կորցրած կառավարության պատվիրակության կողմից), բայցևայնպես թուրքերը մեծապես օգտվեցին դրանից՝ տարածքային զավթումները հետագայում օրինականացնելու համար: Այդ պայմանագիրը ձեռքներին՝ նրանք արդեն 1921թ. փետրվարին գնացին և՛ Լոնդոն, և՛ Մոսկվա: Եվ եթե Անտանտի տերությունները դեռևս բացահայտ գործարքի մեջ չմտան քեմալականների հետ, ապա Մոսկվան, ձգտելով քեմալականներին պահել հակաիմպերիալիստական

---

[65] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 258:

[66] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 264:

[67] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 269:

[68] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 274:

ճամբարում, Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված հայ-թուրքական սահմանագիծը (չնչին փոփոխություններով) դրեց 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի հիմքում[69]:

Այսպիսով՝ քեմալաբոլշևիկյան ռազմաքաղաքական ուժգին ճնշումների տակ դադարեց գոյություն ունենալ Հայաստանի առաջին Հանրապետությունը: Ժամանակի միջազգային հարաբերություններում և տարածաշրջանում ստեղծված քաղաքական բարդ իրավիճակում, Հայաստանի արևմտյան դաշնակիցների դատապարտելի անգործության, Խորհրդային Ռուսաստանի որդեգրած արևելյան քաղաքականության, որը հիմնված էր քեմալական Թուրքիայի հետ սերտ համագործակցության վրա, Խորհրդային Ադրբեջանի՝ թշնամական, Վրաստանի հանրապետության՝ ոչ բարեկամական տրամադրվածության պայմաններում Հայաստանի խորհրդայնացումն իրոք որ «ժամանակի խնդիր էր»[70]:

1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմանագրերը

Ռուսաստանի և կոմունիստական ինտերնացիոնալի համար շարունակում էին գերադասելի նշանակություն ունենալ արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, դրա բորբոքումը հանուն համաշխարհային սոցիալիստական հեղափոխության: Այդ նպատակով մեծ կարևորություն էր տրվում մասնավորապես քեմալական Թուրքիայի դերին: Այդ իմաստով բնորոշ է Վ. Լենինի խոստովանությունը … .«Մենք ստիպված ենք ժամանակավորապես զոհաբերել հայ աշխատավորների շահերը հանուն համաշխարհային հեղափոխության շահերի: Այդպիսի ճակատագիր են բաժանել նաև Էստոնիան, Լատվիան և Լիտվան»: … «մենք չենք պատրաստվում Հայաստանի համար պատերազմել որևէ մեկի, հատկապես Քեմալի հետ»[71]:

Կոմունիստական ինտերնացիոնալը ազգային զոհողությունները դիտում էր որպես համաշխարհային սոցիալիստական հեղափոխության միջոց:

Քեմալական Թուրքիայի հետ Խորհրդային Ռուսաստանը ոչ միայն լավ հարաբերություններ էր հաստատել, այլև փաստորեն ռազմաքաղաքական դաշինքի մեջ էր գտնվում: Դա արտահայտվում էր նաև Թուրքիային զենք ու ռսկի (ֆինանսական միջոցներ) տրամադրելով:

---

[69] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 275-276:

[70] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 286:

[71] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 325-326:

Այդպիսի պայմաններում քեմալական Թուրքիան Հայկական հարցը դարձրեց առևտրի առարկա Ռուսաստանի ու Անտանտի միջև[72]:

Կոնֆերանսի նախապատրաստության ընթացքում իր տեսակետն արտահայտեց նաև Խորհրդային Հայաստանը մասնավորապես 1921թ. հունվարի 8-ին քեմալական Թուրքիային ներկայացրած նոտայում: Մերժվում էին Թուրքիայի բռնազավթած տարածքների հանրաքվեի արդյունքներն ու օրինականությունը, հանրաքվե, որն անց էր կացվել զինագրավման և հայ բնակչությանը արտագաղթի ենթարկելու ու նրա հայրենիքը թուրքերով ու քրդերով բնակեցնելու պայմաններում:

Փետրվարի 5-ի պատասխանում Թուրքիան չէր խորշում պատմական իրականությունը նենգափոխելուց և Հայաստանի դիրքորոշումը մերժելուց[73]:

Կոնֆերանսի նախապատրաստության ընթացքը դրական արդյունքներ չէր խոստանում հայ ժողովրդին[74]:

Քաղաքական հանձնաժողովի առաջին նիստը, որ կայացավ մարտի 10-ին, բացվեց սահմանների մասին հարցով: Ռուսական պատվիրակությունը հայտարարեց, որ իրենք ճանաչում են Թուրքիայի ազգային ժողովի ընդունած Ազգային ուխտը, ըստ որի՝ Թուրքիա էր հռչակվել թուրքերով բնակեցված երկիրը, որ նշանակում էր, թե Թուրքիա է նաև Արևմտյան Հայաստանը, որը Հայոց ցեղասպանությունից հետո հայազրկվել էր և բնակեցվել թուրքերով ու քրդերով: Դա նշանակում էր նաև, որ Խորհրդային Ռուսաստանը շրջադարձ էր կատարել Հայկական հարցի նկատմամբ իր վերաբերմունքի մեջ և, փաստորեն, հրաժարվել «Թուրքահայաստանի մասին» դեկրետից:

Այսպիսով՝ Թուրքիայի կողմում էին թողնվում Կարսի մարզը և Սուրմալուն, որոնց վերաբերյալ բանավեճ ու քննարկում տեղի չեն ունենում, կարծես կողմերը բանակցությունների էին եկել հենց այդպիսի որոշումով, այսինքն՝ հարցը լուծված է եղել բանակցություններից դուրս[75]:

---

[72] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 326:

[73] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 327:

[74] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 329:

[75] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 330:

Նախիջևանի հարցում թուրքական պատվիրակությունը կարծիք է հայտնում, թե քանի որ բնակչությունն է կանչել թուրքական զորքերին, ուստի այդ փաստի ուժով Նախիջևանը գտնվում է թուրքական հովանավորության ներքո: Չնայած դրան՝ ինքը համաձայն է այդ հովանավորությունը զիջել Ադրբեջանին, բայց պայմանով՝ այն չվերազիջվի երրորդ պետության:

Այսպիսով՝ Նախիջևանը Հայաստանին միացնելու մասին ակնարկ անգամ չի եղել կոնֆերանսում: Չընդունելով Ալեքսանդրապոլի պայմանագրի օրինականությունը՝ ռուսական պատվիրակությունն անգամ չի փորձել առաջ քաշել նրա վերանայման հարցը: Կարծես այս հարցում ևս որոշումը կամ պայմանավորվածությունը կայացված է եղել կոնֆերանսից դուրս[76]:

Քաղաքական հանձնաժողովի մարտի 14-ի հերթական նիստում նախորդ արձանագրության շտկումներից հետո քննարկվում է պայմանագիրը հոդված առ հոդված: Կողմերը ներկայացնում են պայմանագրի իրենց տարբերակները: Ռուս-թուրքական կոնֆերանսի վերջին նիստը կայացավ մարտի 16-ին[77]:

Մոսկվայի պայմանագիրը պաշտոնական բոլոր փաստաթղթերում հիշվել է որպես մարտի 16-ի պայմանագիր…:

Ռուս-թուրքական պայմանագիրը, ըստ պայմանագրի նախաբանի, կոչվում է բարեկամության ու եղբայրության…:

Պայմանագիրն ունի 16 հոդված՝ երեք հավելվածներով՝ նվիրված սահմանների մանրամասն նկարագրությանը: Առաջին հոդվածով կողմերը հրաժարվում էին ճանաչել այն միջազգային պայմանագրերը, որոնք անընդունելի կլինեն կողմերից յուրաքանչյուրի համար: Այդտեղ պետք է հասկանալ նաև Սևրի 1920թ. օգոստոսի 10-ի պայմանագիրը, որից Թուրքիան ձգտում էր ազատվել համառորեն: Ռուսաստանը, փաստորեն, ընդունում էր թուրքական Ազգային ուխտը՝ Թուրքիա *հասկացության (սահմանների) մասին:*

Թուրքիայի հյուսիսարևելյան, այսինքն՝ Հայաստանի հետ սահմանն անցնում էր Ախուրյան ու Արաքս գետերով՝ թուրքական կողմում թողնելով Կարսի մարզը, ինչպես նաև Սուրմալուի

---

[76] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 331:

[77] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 332:

գավառը, որը Ազգային ուխտի մեջ չէր մտնում և երբևէ Թուրքիային չէր պատկանել: Սահմանի հարցում, փաստորեն, պահպանվել էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը[78]:

Երրորդ հոդվածով Նախիջևանի մարզը՝ Շարուր-Դարալագյազի գավառի մի մասով, Թուրքիան, որին անցել էր մարզը Ալեքսանդրապոլի պայմանագրով, վերահանձնում է Ադրբեջանին՝ որպես ինքնավար տարածք, բայց պայմանով, որ այն չի կարող տրվել երրորդ պետության, որպիսին հասկացվում է Հայաստանը:

Կողմերը փոխադարձաբար ուժը կորցրած էին հայտարարում այն բոլոր պայմանագրերը, որոնք փոխադարձաբար չէին համապատասխանում միմյանց շահերին (հոդված 6)[79]:

Կողմերը պարտավորվում էին իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների ու խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք կարող էին կառավարության դեր հավակնել մյուս կողմի (ամբողջի կամ մասի) սահմաններում: Դա կանխարգելում էր, օրինակ, հայկական որևէ կազմակերպության կողմից Արևմտյան Հայաստանում նման որևէ քայլ ձեռնարկելը: Պայմանագրի 15-րդ հոդվածով Ռուսաստանը պարտավորվում էր Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ դիմել այնպիսի քայլերի, որպեսզի նրանք ճանաչեն Մոսկվայի պայմանագրի իրենց վերաբերող հոդվածները: Դա իրականացվելու էր հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերի միջոցով[80]:

Իր քաղաքական նպատակների և համաշխարհային հեղափոխության անհեռանկար հույսերի համար Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը զոհաբերեց Հայաստանի ու հայ ժողովրդի շահերը, հայկական տարածքները նվիրաբերվեցին Թուրքիային: «Համաշխարհային հեղափոխությունը» հօդս ցնդեց, իսկ տուժեց հայ ժողովուրդը: Քեմալական Թուրքիան Հայկական հարցը դարձրեց առևտրի (աճուրդի) առարկա Անտանտի ու Ռուսաստանի միջև և հասավ նրան, որ մեծապես շահեց երկուսից էլ: Մոսկվայում յուրացրեց հսկայական տարածքներ:

---

[78] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 333:

[79] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 334:

[80] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 334-335:

Միջազգային իրավունքի կոպիտ խախտում պետք է համարել միջազգայնորեն չճանաչված երկու պետությունների (Ռուսաստան և Թուրքիա) կողմից երրորդ պետության (Հայաստան) կենսականորեն կարևոր հարցերի լուծումը՝ առանց նրա մասնակցության, հակառակ նրա ժողովրդի կամքի[81]:

Մոսկվայի պայմանագիրը դժբախտություն էր հայ ժողովրդի համար: Այն հանգուցալուծումն էր 1920թ. սկիզբ առած բոլշևիկ-քեմալական համագործակցության և ռուս բոլշևիկների որդեգրած արևելյան քաղաքականության, համաշխարհային հեղափոխության գաղափարների ու այդ ուղղությամբ կատարած գործունեության, հեղափոխություն, որին, ըստ բոլշևիկ առաջնորդների, կարելի էր նույնիսկ զոհաբերել (թեկուզ ժամանակավոր) ամբողջ ժողովուրդներ: Մոսկվայի պայմանագիրը նպաստեց քեմալական Թուրքիայի ինքնահաստատմանը, միջազգային ասպարեզում նրա դերի ուժեղացմանը: … Պատմական տվյալ ժամանակաշրջանում ազգայնական Թուրքիան պետք եղավ Խորհրդային Ռուսաստանին, ուստի առաջինը լավագույնս օգտագործեց այդ հանգամանքը՝ իր օգտին զիջումներ անելու համար: Զիջումներն արվեցին մի պետության, որն իրավահաջորդն էր ցեղասպան Օսմանյան կայսրության, իսկ նա ոչ միայն չխոստովանեց տեղի ունեցած ոճրագործությունը, այլև շարունակեց նույն քաղաքականությունը: Իսկ նրա հետ դաշնակցած Ռուսաստանը, աչք փակելով այդ ամենի առաջ, փաստորեն ստանձնեց հովանավորի դեր և ստորագրած պայմանագրով հարկադրեց Խորհրդային Հայաստանին ընդունել սեփական կորուստները, դրանց մասին որոշումները:

Մոսկվայի պայմանագիրը միջազգային իրավունքի կոպիտ խախտում է և դրանով իսկ ենթակա է վերանայման: Նույնը վերաբերում է Կարսի պայմանագրին, որը կնքվելու էր առաջիկայում[82]:

Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը (հոդված 15-րդ) Ռուսաստանին պարտավորեցնում էր Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի նրանք ընդունեն տվյալ պայմանագրի՝ իրենց վերաբերյալ հոդվածները: Դա տեղի ունեցավ Կարսի կոնֆերանսում[83]:

Հոկտեմբերի 13-ին ստորագրվեց այսպես կոչված բարեկամության մասին պայմանագիրը Հայկական ՍԽՀ, Ադրբեջանական ՍԽՀ ու Վրացական ՍԽՀ՝ մի կողմից, և Թուրքիայի միջև՝

---

[81] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 335:

[82] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 337:

[83] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 367:

մյուս կողմից, ՌՍԴԽՀ մասնակցությամբ: Այն, ըստ էության, վերարտադրում էր մարտի 16-ի պայմանագրի որոշումները, ինչպես և սպասվում էր ու կանխորոշված էր: Հայկական շահերի համար ծավալված պայքարն ուներ միայն ցուցադրական նշանակություն: Հայ ժողովրդի շահերը զոհաբերվել էին Մոսկվայում, իսկ Կարսում այդ որոշումների տակ դրվելու էր նաև ՀՍԽՀ ներկայացուցչի ստորագրությունը[84]:

Կարսի պայմանագրի վավերացումը տեղի ունեցավ 1922թ. մարտին: Խորհրդային Հայաստանի կառավարությունը Կարսի պայմանագիրը վավերացրեց մարտի 20-ին, իսկ քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի փոխադարձ պայմանավորվածությամբ՝ վերջիններս Կարսի պայմանագիրը վավերացրին միաժամանակ՝ մարտի 16-ին՝ Մոսկվայի ռուս-թուրքական թալանչիական պայմանագրի տարեդարձի օրը[85]:

Դաշինքի մեջ մտած քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը, փաստորեն, բաժանեցին Հայաստանը, դիվանագիտորեն ձևակերպեցին իրենց որոշումները՝ առանց և ընդդեմ երրորդ պետության՝ Խորհրդային Հայաստանի, ինչը միջազգային իրավունքի ամենակոպիտ խախտում ու ոտնահարում էր: Խորհրդային Ռուսաստանը հայ ժողովրդի շահերը զոհաբերեց հանուն իր արևելյան քաղաքականության ու համաշխարհային հեղափոխության: Հայ ժողովրդի ու Հայաստանի վզին փաթաթված այդ որոշումների վերանայումը մնում է որպես հայ ժողովրդի արդարացի պահանջ[86]:

Քեմալականների իրականացրած ցեղասպանության փաստեր

Քեմալականների գաղափարախոսությունը և ծրագրային նպատակները պաշտոնական ձևակերպում ստացան Էրզրումում (1919թ. հուլիսի 23 – օգոստոսի 6) և Սվազում (1919թ. սեպտեմբերի 4-11) տեղի ունեցած «Արևելյան նահանգների իրավունքների պաշտպանության կազմակերպության» և «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կազմակերպություններ» խորհրդաժողովներում: Դրանց ընդունած որոշումները կասկած չէին հարուցում, որ քեմալականները ոչ միայն չեն հրաժարվելու սուլթանական և երիտթուրքերի

---

[84] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 372:

[85] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 373:

[86] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 374:

կառավարությունների հայաջինջ քաղաքականությունից, այլև դառնալու են դրա անմիջական շարունակողը[87]:

Քեմալականների քաղաքական նպատակները բանաձևվեցին 1920թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի մեջլիսի (խորհրդարանի) կողմից ընդունված «Թուրքական ազգային ուխտում»: Նրանում մասնավորապես հռչակվում էր, որ հայկական համայնքի ստեղծումը կանխելը պետք է լինի յուրաքանչյուր թուրքի սրբազան գործը, իսկ Հայաստանի ոչնչացումը՝ առաջնահերթ խնդիրը: Առաջնորդվելով «Մենք կապրենք կամ կկործանվենք Ազգային ուխտի հետ միասին» կարգախոսով՝ քեմալականները կանգնեցին Թուրքիայում ոչ թուրք ժողովուրդների բնաջնջման ուղու վրա: Այսպիսով՝ անցնում էին տարիներ, փոխվում էին կառավարություններ, փոխվում էր միջազգային իրադրությունը, բայց անփոփոխ էր մնում թուրքերի և նրանց առաջնորդների հայատյացությունը, ընդհակառակը՝ այն ավելի էր սաստկանում[88]:

Հատկանշական է, որ ինչպես ժամանակին երիտթուրքերը, քեմալականները նույնպես առաջինը թիրախ դարձրին Կիլիկիան և օգտվելով ֆրանսիական կառավարության, մեղմ ասած, երկդիմի քաղաքականությունից՝ 1920թ. ընթացքում այդտեղ կոտորեցին կամ բռնագաղթի ենթարկեցին Մարաշի, Զեյթունի, Այնթապի, Հաճընի տասնյակ հազարավոր հայերի: Դրանով քեմալականները տապալեցին Կիլիկիայում դաշնակիցների կողմից «հայկական օջախ» ստեղծելու «մտադրությունները»[89]:

Քեմալականները ոչ միայն շարունակեցին տեղում մնացած հայերի բնաջնջումը Կիլիկիայում, կայսրության այլ տարածքներում, այլև շուտով ձեռնամուխ եղան արևելահայության ոչնչացմանը և Արևելյան Հայաստանի տարածքների բռնազավթմանը:

1920թ. գարնանն, ինչպես նշվել է, քեմալականների անմիջական մասնակցությամբ ադրբեջանցի հրոսակախմբերն իրականացրին Շուշիի և մերձակա հայկական բնակավայրերի հազարավոր հայերի սպանդը:

---

[87] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 213:

[88] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 213-214:

[89] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 214:

Հայության նկատմամբ քեմալականների ոճրագործությունների գագաթնակետը նրանց ռազմարշավն էր Հայաստանի Հանրապետության վրա 1920թ. աշնանը[90]:

Թուրք-հայկական պատերազմի ընթացքում միայն Կարսի մարզում քեմալական զորքերը կոտորեցին, գերության քշեցին տասնյակ հազարավոր հայերի, չխնայեցին անգամ Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտեի խնամքի տակ գտնվող 6 հազար որբ հայ երեխաներին:

Քեմալականների հալածանքները հայ ժողովրդի նկատմամբ շարունակվեցին նաև Հայաստանի խորհրդայնացումից հետո: Թուրքական զորքերը շարունակում էին ավերել Հայաստանի զինագրավված շրջանները, կոտորել տեղի բնակչությանը, մինչդեռ ժողովուրդը միամտորեն կարծում էր, թե խորհրդայնացումից հետո թուրքերը կհեռանան Հայաստանից[91]:

Քեմալական թուրքերի վայրագություններն առավել մեծ չափերի հասան նրանց կողմից զինագրավված Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառում: 1920թ. նոյեմբեր – 1921թ. ապրիլ ամիսներին այդտեղ կոտորվեցին, գերության քշվեցին, սովամահ եղան ավելի քան 100 հազար հայեր:

1921թ. փետրվարի վերջին և մարտին քեմալական զորքերը, դավադրաբար ներխուժելով Ախալքալաքի գավառ, այդտեղ իրականացրին հայ բնակչության զանգվածային ջարդեր: Հայերի կոտորածները կրում էին կազմակերպված բնույթ և արտոնված էին քեմալական կառավարության կողմից:

Քեմալականների հայաջինջ քաղաքականությունը շարունակվում էր նաև Թուրքիայի արևմտյան շրջաններում: Առավել սահմռկեցուցիչ ընթացք ստացան Իզմիրում (Զմյուռնիա) 1922թ. աշնանը տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները: … Մի քանի օր շարունակվող վայրագությունների հետևանքները (կոտորվեցին մոտ 30 հազար հայեր, տասնյակ հազարավոր հույներ) թաքցնելու նպատակով քեմալականներն իրենց առաջնորդի ներկայությամբ սեպտեմբերի 13-ին հրի մատնեցին ծաղկուն քաղաքը[92]:

---

[90] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 215:

[91] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 216:

[92] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 216-217:

Այսպիսով՝ քեմալական թուրքերի՝ Կիլիկիայում, Թուրքիայի արևմտյան շրջաններում և Արևելյան Հայաստանում 1919-1922թթ. կատարածը ոչ այլ ինչ է, քան հայության ծրագրված ոչնչացում և հայկական տարածքների բռնի յուրացում: Ըստ փաստագրական և վիճակագրական տվյալների և տարբեր հետազոտողների կողմից մինչ օրս կատարված ուսումնասիրությունների՝ քեմալական ռազմարշավների հետևանքով նշված տարածքներում կոտորվեցին, սովից և համաճարակներից մահացան, ինչպես նաև թուրքացվեցին շուրջ 500 հազար հայեր: Իրականացրած ցեղասպանությամբ քեմալականներին ոչ միայն հաջողվեց Թուրքիայի կազմում պահել Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան, այլև հայ ժողովրդից բռնազավթել նրա արևելյան տարածքների զգալի մասը[93]:

Այսպիսով՝ Թուրքիայի սուլթանական, երիտթուրքերի և քեմալականների կառավարությունների՝ հայ ժողովրդի նկատմամբ վարած ցեղասպան քաղաքականության և այն իրականացնելու մեխանիզմների միջև տարբերություն գրեթե չկար. այն շարունակական և նպատակաուղղված գործընթաց էր: Թուրքական իշխանությունների կողմից տասնամյակներ շարունակ փուլ առ փուլ իրականացված ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը կորցրեց իր պատմական հայրենիքի մեծ մասը: Հայկական պետությունը ներփակվեց ռազմավարական առումով խիստ խոցելի և փոքրիկ տարածքի վրա: Հակառակ դրան՝ հայ ժողովրդի մի մասին ոչնչացնելով, նրա պատմական տարածքները, մշակութային և նյութական արժեքները յուրացնելով՝ կործանման եզրին հայտնված թուրքական պետությունը ոչ միայն պահպանեց իր գոյությունը, այլև աշխարհագրական և ռազմավարական կարևոր դիրք զբաղեցնելով՝ իր տեղը գտավ աշխարհի ուժեղ պետությունների շարքում:

Քանի դեռ Թուրքիայի Հանրապետությունը պետական ամենաբարձր մակարդակով որդեգրել է պատմական իրողությունը ժխտելու, Հայոց ցեղասպանությունը չճանաչելու քաղաքականություն, շարունակելու է կիսել իր նախորդների՝ սուլթանական, երիտթուրքական և քեմալական կառավարությունների ողջ պատասխանատվությունը XX դարի առաջին ցեղասպանության, «համայն մարդկության դեմ ուղղված ոճրագործության համար»[94]:

---

[93] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 217:

[94] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., էջ 218: